«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ-Ի ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է քոլեջի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 14
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 17
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 28
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 33
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 38
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 41
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 45
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 48
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 51
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 57
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 60
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 63
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 67

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի քոլեջը հիմնադրվել է 1996 թ.-ին: Ի սկզբանե Քոլեջը գործել է Լոռու մարզի Ալավերդի քաղաքի մասնաճյուղին տրված լիցենզիայի հիման վրա: 2011 թ.-ից գործունեության իրականացման լիցենզիա տրվել է նաև Հյուսիսային համալսարանի երևանյան գլխամասին:

Քոլեջը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջը կրթական ծրագրեր է իրականացնում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում: 1996թ.-ից իրականացրել է կրթական ծրագրեր «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններով: 2024 թ.-ից քոլեջն ընդլայնել է կրթական ծրագրերի ուղղությունները, ներդրվել են «Նախադպրոցական կրթություն», «Հաշվապահական հաշվառում», «Իրավագիտություն» կրթական ծրագրերը՝ առկա և հեռակա ուսուցմամբ:

Հաստատությունում ներկայումս կրթություն է ստանում 109 ուսանող:

Քոլեջում դասավանդում են 41 դասախոս՝ 23 հիմնական և 18 համատեղող դասախոսներ: Դասախոսական կազմի միջին տարիքը 49 է:

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2022-2023թթ. դրությամբ 32 շրջանավարտների 28%-ը աշխատում են, որից 13%-ը իրենց մասնագիտությամբ, 15%-ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, 19%-ը ուսումը շարունակել է բուհում, 13%-ը զորակոչվել է բանակ, մյուսները գործազուրկ են:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Հյուսիսային համալսարանի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ, ինչպես նաև, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում:

Քոլեջի առաքելությունում շեշտադրված է որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստումը: Քոլեջը կարևորել է կրթական ծրագրերի բազմաբնույթ ընդլայնումը՝ հիմնված առկա ռեսուրսների և աշխատաշուկայի դիտարկման վրա: Սակայն ռազմավարական ծրագրի մշակման և իրագործման գործընթացում առկա են մեթոդաբանական բացեր՝ մասնավորապես՝ շահակիցների ներգրավման, չափելի արդյունքների բացակայության,ինչպես նաև ծրագրի և հաշվետվությունների ու վերլուծությունների միջև փոխկապակցության մասով:

Հյուսիսային համալսարանի քոլեջի կառավարումն իրականացվում է բազմաշերտ մոդելով՝ համալսարանի և Կառավարման խորհրդի ներգրավմամբ, սակայն ռազմավարական կառավարման գործընթացներում բացակայում են հստակ փոխկապակցված գործակցությունը, չափելի ցուցիչները և շահակիցների ակտիվ մասնակցությունը: Քոլեջի ֆինանսական պլանավորման, ռազմավարական և աշխատանքային պլանների միջև կապի բացակայությունը, ինչպես նաև տվյալահենք և հետազոտահենք մոտեցումների թերի կիրառումը սահմանափակում են կառավարման արդյունավետությունը: Դրա հետ մեկտեղ, քոլեջի՝ համալսարանի կազմում գտնվելը որոշակի գործառույթների համատեղ իրականացման և ռեսուրսների համատեղ կիրառման հնարավորություններ է ստեղծում:

Քոլեջում որակի ներքին ապահովման համակարգը նույնացվում է բուհի Որակի ապահովման վարչության հետ և մեծապես կենտրոնանում է բուհի մասշտաբով իրականացվող գործընթացների վրա՝ առանց քոլեջի առանձնահատկությունների առանձին վերլուծության: Չնայած իրականացվում են որոշ աշխատանքներ՝ ուսանողների, դասախոսների, գործատուների կարիքների վերհանման և որոշ բարելավումների ուղղությամբ, սակայն տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց հիման վրա որոշումների կայացման մեխանիզմները համակարգված չեն: Որակի ապահովման համակարգի գործիքակազմը դեռևս լիարժեք չի փորձարկվել քոլեջի մասով, և արդյունքները հիմնականում չեն փոխակերպվում բարելավման կոնկրետ գործողությունների: Բացի այդ, շահակիցների մասնակցությունն ինքնավերլուծության և որակի ներքին ապահովման գործընթացներին խիստ սահմանափակ է: Այնուամենայնիվ, ռեսուրսների բարելավման ուղղությամբ գործնական քայլերը դրականորեն են անդրադառնում նաև քոլեջի վրա, միաժամանակ քայլեր են ձեռնարկվել ուսանողների կարիքների ուսումնասիրության նպատակով գործիքների վերանայման ուղղությամբ:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ չնայած քոլեջը ՌԾ է մշակել և որոշ աշխատանքներ է իրականացրել որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ, սակայն դեռ տվյալահենք կառավարման գործընթացներում լուրջ բարեփոխումների կարիք կա:

Հյուսիսային համալսարանի քոլեջը ցուցաբերում է ակտիվություն նոր մասնագիտությունների ներդրման, համեմատական վերլուծությունների իրականացման և միջազգային փորձի ուսումնասիրման ուղղությամբ: Կրթական ծրագրերը համալրվել են գործնական բաղադրիչներով, սակայն դրանց ամբողջական ներդրումը դեռևս ընթացքի մեջ է: Չնայած որոշ մասնագիտական քննարկումների և չափորոշիչների մշակման գործընթացին դասախոսների մասնակցությանը, կրթական գործընթացի կառավարման ու մշտադիտարկման մեխանիզմները դեռևս ամբողջական չեն: Դասավանդման մեթոդների, գնահատման չափանիշների և ինքնուրույն աշխատանքների պահանջների հստակեցման կարիք կա:

Քոլեջը վերջին տարիներին իրականացրել է քայլեր դասախոսական կազմի համալրման, որակավորման բարձրացման և գնահատման ուղղությամբ: Դասախոսների մեծամասնությունն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, իսկ վերապատրաստման և գնահատման գործընթացները մասամբ ձևավորված են: Քոլեջը կարևորում է պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների ներգրավումը դասավանդման գործընթացում, և այս ուղղությամբ նկատելի են արդյունքները: Սակայն որոշ դեպքերում առկա են անհամապատասխանություններ դասավանդվող առարկաների և դասախոսների մասնագիտական որակավորման միջև, ինչպես նաև բացակայում են դասալսումների արդյունքների վերլուծության ու կիրառման գործընթացները: Քոլեջը քայլեր է ձեռնարկում երիտասարդ կադրերի ներգրավման ուղղությամբ, բայց սկսնակ դասախոսների համար մենթորության հստակ քաղաքականություն դեռևս առկա չէ:

Քոլեջը կարևորում է ենթակառուցվածքների բարելավումն ու ռեսուրսների համալրումը, ինչը դրսևորվում է լսարանների վերանորոգման, տեխնիկական միջոցների թարմացման և գրադարանային հնարավորությունների ընդլայնման միջոցով: Ռեսուրսների համատեղ օգտագործումը բուհի հետ նպաստում է ծախսերի օպտիմալացմանը և ուսանողների համար հնարավորությունների ընդլայնմանը: Սակայն որոշ լաբորատորիաների, թեքահարթակների բացակայությունը որոշակիորեն խոչընդոտում են կրթական միջավայրի ամբողջական զարգացմանը: Քոլեջը կարողանում է կիրառել գործատուների ռեսուրսները՝ ուսանողների գործնական կարողությունների ձևավորման նպատակով: Դեռևս ձևավորված չէ համակարգված մոտեցում մասնագիտական գրականության համալրման, կարիքների գնահատման և ֆինանսական կայունության ապահովման ուղղությամբ:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանի քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Քոլեջն ակտիվ քայլեր է ձեռնարկում ուսանողների հավաքագրման ուղղությամբ՝ օգտագործելով տեղեկատվական միջոցները, այցելությունները և սոցցանցերը: Այդ գործընթացների և նոր մասնագիտությունների ներդրման արդյունքում ապահովվել է ուսանողների թվի աճ: Ուսանողների կրթական կարիքների վերհանումը, խորհրդատվական աջակցությունը և կարիերային աջակցման մեխանիզմների առկայությունը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Միաժամանակ, օտարերկրյա

ուսանողների հեռացման բարձր տոկոսը, լեզվաիմացության խնդիրները և հետազոտական բաղադրիչի թույլ զարգացումը որոշակի մարտահրավերներ են ստեղծում: Նկատելի է ՈւԽ-ի պասիվությունը ուսանողական իրավունքների պաշտպանության և ուսանողների կարիքների բացահայտման հարցերում:

Քոլեջը գիտակցում է հետազոտական ներուժի զարգացման կարևորությունը և ռազմավարական փաստաթղթերում ընդգծում է համապատասխան նպատակներ: Դասավանդող կազմի մեջ ընդգրկված բուհի փորձառու մասնագետները կարևոր ռեսուրս են հետազոտական կարողությունների ձևավորման համար: Սակայն, հետազոտական բաղադրիչի կիրառումը կրթական ծրագրերում և ուսումնական գործընթացում դեռևս թույլ է, առկա չէ հստակ քաղաքականություն և մեթոդական շրջանակ: Ուսանողական հետազոտական հմտությունների ձևավորումը սահմանափակվում է նկարագրական բնույթի առաջադրանքներով՝ առանց վերլուծական խորության: Ուստի անհրաժեշտ է զարգացնել հետազոտական ուղղվածության պլանավորումը և հստակ քայլեր ձեռնարկել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ամրապնդման համար:

Քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկում հասարակության հետ կապի ամրապնդման և հանրային թափանցիկության ապահովման ուղղությամբ՝ օգտագործելով սոցիալական հարթակները և համալսարանի կայքէջը: Գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում նկարագրական է, առանց որակական վերլուծությունների: Հասարակության հետ աշխատանքը հիմնականում իրականացվում է տեղեկացման և ուսուցողական միջոցառումների ձևով, սակայն դրանց պլանավորումը համակարգված չէ: Դիտվում է նաև ներուժ՝ տեղեկատվական հասանելիության ու հաղորդակցման արդյունավետության բարձրացման համար՝ մասնավորապես՝ մասնագիտական տեսանյութերի և աշակերտների հետ համագործակցության միջոցով: Հաշվետվողականության համակարգը դեռևս բարելավման կարիք ունի, ինչպես նաև անհրաժեշտություն կա զարգացնելու հասարակական պատասխանատվության պլանավորված քաղաքականություն:

Քոլեջը ՌԾ-ում կարևորել է միջազգայնացման ուղղությունը, սակայն նշված խնդիրներից միայն մեկը՝ միջազգային համագործակցությունների զարգացումը, գտնվում է նախնական փուլում: Չնայած առկա են միջազգային ծրագրերին դիմելու և օտարերկրյա ուսանողներ ներգրավելու որոշ նախաձեռնություններ, դրանք դեռևս ամբողջությամբ գործնական արդյունքներ չեն ապահովել: Քոլեջը օգտվում է համալսարանի ստեղծած հնարավորություններից՝ մասնավորապես դասախոսների շարժունության, օտար լեզվի ուսուցման և գործատուների ցանցի առումով, սա նպաստում է քոլեջի զարգացմանը: Սակայն անհրաժեշտ է առավել համակարգված և նպատակային քաղաքականություն՝ ուղղված թե՛ օտարերկրյա կապերի ընդլայնմանը, թե՛ օտար լեզուների իմացության բարելավմանը և գնահատմանը: Օտարերկրյա ուսանողների ներգրավման, ինչպես նաև կրկնակի դիպլոմի ծրագրերի իրականացման հարցում առկա են խոչընդոտներ, ինչի արդյունքում քոլեջը նախատեսում է վերանայել համապատասխան ՌԾ նպատակը:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջը բավականին ջանքեր է ներդնում և գործընթացներ իրականացնում հաստատության զարգացման ուղղությամբ, սակայն այս ուղղությամբ դեռևս բավականին անելիքներ կան:

Հաստատության ուժեղ կողմերն են.

- Գործատուների հետ քննարկումների արդյունքում նոր մասնագիտությունների ներդրումը՝ ուղղված կրթական առաջարկի ընդլայնմանը և ուսանողների մասնագիտական ընտրության հնարավորությունների ավելացմանը,
- Գործատուների հետ արդյունավետ համագործակցությունը՝ միտված ուսանողների պրակտիկաների կազմակերպմանն ու աշխատաշուկայում պահանջվող հմտությունների ձևավորմանը,
- Համալսարանի հետ համատեղ գործելու շնորհիվ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների հետ կապված առկա հնարավորությունները,
- Շրջանավարտների հաջողված փորձի ներկայացման նախաձեռնությունը քոլեջի կրթական արդյունքների տեսանելիության և ուսանողների կարիերային կողմնորոշման նպատակով,
- Դիմորդների ներգրավման գործող մեխանիզմները և ուսանողների կայուն հոսքի ապահովումը, ինչպես նաև օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ կրթական ծրագրեր իրականացնելու ներուժը միջազգային կրթական շուկայում,
- Աշխատաշուկայում պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետների ներգրավվածությունը դասավանդման գործընթացներում,
- Բազմապիսի դասավանդման մեթոդների կիրառումը ուսումնառության գործընթացում,
- Արտաքին կապերի լայն շրջանակը և միջազգայնացման ուղղությամբ Քոլեջի իրականացրած նախաձեռնությունները՝ հիմնված նաև բուհի ներուժի վրա։

Հաստատության թույլ կողմերն են.

- Ռազմավարական ծրագրի և ստորաբաժանումների պլանների միջև կապի բացակայությունը,
- Քոլեջի նպատակային ռազմավարական ֆինանսավորման բացակայությունը, ֆինանսական կառավարման և ռեսուրսների բաշխման գործընթացներում քոլեջի առանձնահատկությունների հստակ արտահայտվածության բացակայությունը,
- Որակի ապահովման մեխանիզմների թերի զարգացումը, մասնավորապես՝ քոլեջի մակարդակով առանձնացված մեթոդաբանության և գնահատման ցուցիչների բացակայությունը,
- Տվյալահենք կառավարման համակարգի թերի զարգացումը՝ քոլեջի վերաբերյալ համապարփակ տվյալների հավաքագրման և կիրառման պակասով,
- Շահակիցների սահմանափակ ներգրավվածությունը ռազմավարական պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում,
- Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման համակարգված գործընթացների թերի արտահայտվածություն,
- Ֆինանսավորման աղբյուրների սահմանափակությունը,
- Ուսանողներին տրվող առաջադրանքներում հետազոտական բաղադրիչի, ինչպես նաև՝ ուսանողների հետազոտական, վերլուծական կարողությունների թերի արտահայտումը,
- Հետազոտական գործընթացների ոչ պլանավորված բնույթը, հստակ ակնկալիքների և նպատակային գործընթացների թերի արտահայտումը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Հստակեցնել Քոլեջի առաքելությունը՝ շեշտադրելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները և շրջանավարտների մրցակցային առավելությունները։
2. Ռազմավարական ծրագրի արդյունավետ իրագործման համար սահմանել հստակ չափելի ցուցիչներ և կանոնակարգել ընթացիկ գնահատման գործընթացները՝ ապահովելու, որ Քոլեջը մշտապես գնահատի իր առաջընթացը և երաշխավորելու ռազմավարական նպատակների հետևողական իրագործումը։
3. Խթանել ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը կառավարման խորհրդի, ռազմավարական պլանավորման և որակի ապահովման աշխատանքներում։
4. Ներդնել ՊԻԳԲ շրջափուլը քոլեջի կառավարման բոլոր մակարդակներում՝ ներառելով բոլոր ստորաբաժանումներն ու ապահովելով շարունակական կատարելագործում։
5. Ապահովել պլանավորման և հաշվետվողականության գործընթացների փոխկապակցվածությունը՝ հիմնվելով չափելի ցուցանիշների, հստակ գնահատման մեխանիզմների և ձեռք բերված արդյունքների վերլուծության վրա։
6. Մշակել տվյալահենք կառավարման համակարգ՝ պարբերաբար հավաքագրելով, վերլուծելով և օգտագործելով քոլեջի գործունեությանը վերաբերող տվյալները՝ դրանք դարձնելով հիմնարար գործիք ռազմավարական որոշումների կայացման համար։
7. Մշակել ՈՆԱ մեթոդաբանություն Քոլեջի համար՝ հաշվի առնելով քոլեջի կրթական առանձնահատկությունները, ուսանողական կազմի կարիքները և ուսումնական ծրագրերի բովանդակությունը։
8. ՈՆԱ համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով սահմանել համակարգի արդյունավետության գնահատման հստակ ցուցիչներ և չափելի ակնկալվող արդյունքներ։
9. Հաշվի առնելով Քոլեջի ուսանողների, դասախոսների և գործատուների առանձնահատկությունները՝ վերանայել և լրամշակել հարցաշարերը, ապահովել հարցումների պարբերականությունը և դրանցում շահակիցների լայն շրջանակի ընդգրկվածությունը։

Որակավորումների արժանահավատ շնորհում

10. Պարբերաբար իրականացնել աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրություն և արդյունքները ներառել ուսումնական ծրագրերի ձևավորման և կամընտրական առարկաների պլանավորման փուլում՝ ապահովելու շրջանավարտների մրցունակության բարձրացումը։
11. Ինտեգրել բենչմարքինգի արդյունքները կրթական ծրագրերում՝ ներգրավելով դասախոսական կազմը և մասնագիտական կրթական ծրագրերի պատասխանատուներին՝ ապահովելու միջազգային փորձի կիրառումը և ուսուցման բովանդակության արդիականացումը։

12. Նախատեսել և ներդնել կրթական ծրագրերում գործնական առաջադրանքների նվազագույն պահանջներ՝ ապահովելու ուսանողների գործնական հմտությունների հետևողական զարգացում և ուսուցման արդյունքների համաչափություն ազգային և միջազգային աշխատաշուկայի պահանջներին:
13. Ներդնել առաջադրանքների բազաներ բոլոր մասնագիտությունների համար՝ ապահովելու ուսանողների կարողությունների աստիճանական զարգացում:
14. Հստակեցնել ուսանողների գնահատման չափանիշները և հետադարձ կապի տրամադրման մեխանիզմները:
15. Վերլուծելամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները և դրանց հիման վրա իրականացնել կրթական ծրագրերի բարելավում՝ ապահովելու կրթության որակի շարունակական զարգացում:
16. ՄԿԾ-ների համար ներդնել համապարփակ մշտադիտարկման համակարգ՝ ապահովելու կրթական ծրագրերի շարունակական բարելավում, թույլ տալով նախօրոք բացահայտել խնդիրները և իրագործել բարելավման նպատակային գործողություններ:
17. Հստակեցնել դասախոսական կազմի գնահատման և դրա հենքով կատարելագործման և առաջընթացի մեխանիզմները:
18. Ներդնել սկսնակ դասախոսների մենթորության մեխանիզմներ և պլանավորել փորձի փոխանակման միջոցառումները լավագույն փորձառության վերհանման և տարածման նպատակով:
19. Սահմանել դասախոսների խրախուսման հստակ չափանիշներ և մեխանիզմներ՝ դասախոսական կազմի առաջընթացի ապահովման նպատակով:
20. Քայլեր ձեռնարկել կրթական ծրագրերի համար անհրաժեշտ լաբորատորիաների ձևավորման, վերազինման կամ գործատուների ռեսուրսների հասանելիության ընդլայնման համար՝ ուղղված ուսանողների գործնական կրթության հնարավորությունների բարելավմանը:
21. Քայլեր ձեռնարկել այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմներ ներգրավելու ուղղությամբ՝ ուղղված ֆինանսական կայունության ապահովմանն ու ռեսուրսների համալրման հնարավորությունների ընդլայնմանը:
22. Հավաքագրել ֆինանսական ծախսերի տվյալները, հաշվարկել նվազագույն անհրաժեշտ ռեսուրսները և վերլուծել դրանք՝ ֆինանսական պլանավորման և ռեսուրսների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Երկարաժամկետ զարգացում

23. Ներդնել քոլեջի տեղացի և օտարերկրյա ուսանողների կրթական կարիքների վերհանման առանձին մեխանիզմներ՝ հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները:
24. Մշակել և ներդնել հստակ քաղաքականություն, որը կխթանի Քոլեջի ուսումնական գործընթացին ուղղված կրթական ծրագրերի ոլորտներն ընգրկող հետազոտությունների իրականացումը:
25. ՄԿԾ-ներում և մասնագիտական մոդուլներում ներառել հետազոտական աշխատանքներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, սահմանել դրանց իրականացման չափանիշներ և պահանջներ:

26. Զարգացնել քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի ուղղությամբ միջազգային փորձի ուսումնասիրման գործընթացը՝ ուսումնական նյութերի պատրաստման և հետազոտական գործունեության արդիականացման նպատակով:
27. Վերանայել հաշվետվությունների ներկայացման ձևաչափերը՝ ներառելով գնահատման հստակ ցուցիչներ և վերլուծությունների արդյունքները դնել հաջորդ պլանավորման հիմքում:
28. Ձևավորել PR ռազմավարություն՝ քոլեջի գործունեության մասին իրազեկման գործընթացի ուղղությամբ ռեսուրսների արդյունավետ բաշխման, արտաքին շահակիցների հետ համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:
29. Քոլեջի ներուժի կիրառմամբ պլանավորել և պարբերաբար իրականացնել արտաքին շահակիցներին գիտելիքների փոխանցման միջոցառումներ՝ սոցիալական պատասխանատվության իրացման ու քոլեջի մասին իրազեկվածության բարձրացման նպատակով:
30. Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ սահմանել Քոլեջի ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված կոնկրետ քայլեր և առաջնահերթություններ՝ նպաստելու փորձի փոխանակմանը և լավագույն փորձի տեղայնացմանը:
31. Պլանավորված կերպով կազմակերպել օտար լեզվի դասընթացներ՝ դասախոսների, վարչական անձնակազմի և ուսանողների լեզվական հմտությունների բարձրացման նպատակով, ինչը հնարավորություն կտա ընդլայնելու միջազգային համագործակցության շրջանակները, խթանել շարժունությունը և օտարերկրյա ուսանողների ավելի արդյունավետ ինտեգրումը կրթական գործընթացում:

_____

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20-ը մայիսի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հյուսիսային համալսարանի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Արմենուհի Սարգսյան՝ ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի դասախոս, գիտական նախագծերի անդամ, փորձագիտական խմբի ղեկավար:

Գոհար Մկրտչյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական բժշկական ինստիտուտի Հայոց լեզվի և օտար լեզուների ամբիոնի վարիչ, Կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:

Անահիտ Արշակյան՝ Մարտունի բժշկական կենտրոնի մանկաբույժ, Մարտունու պետական բժշկական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:

Անգելինա Տոնոյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Հյուսիսային համալսարանի քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

ՈԱԱԿ դիտարկումների հիման վրա քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ՈԱԱԿ ներկայացվել է 2025թ. փետրվարի 3-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ համակազմի և ուսանողների կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան

ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

Փետրվարի 28-ին հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2025 թ. մարտի 12-14-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը փորձագետների հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին 2025թ. ապրիլի 30-ին: 2025 թ. մայիսի 14-ին հաստատությունը ներկայացրել է իր համաձայնությունը փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ, որից հետո փորձագիտական խումբը պատրաստել է վերջնական զեկույցը: Խմբի բոլոր անդամների հաստատումից հետո զեկույցը տրամադրվել է ուսումնական հաստատությանը:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

20-ը մայիսի, 2025 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Հյուսիսային համալսարանի քոլեջի առաքելությունն ամրագրված է 2023-2026թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է. «Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակում միջին մասնագիտական կրթական ծրագրերի ոլորտում համապատասխան մասնագետներ պատրաստելը, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով և պրակտիկ հմտություններով կնպաստեն կյանքի որակի բարձրացմանը և կլինեն բազմակողմանի զարգացած և մասնագիտական ու մի շարք փափուկ հմտություններով աչքի ընկնող, ինքնազարգացման կարողությամբ աշխատաշուկայում մրցունակ կադրեր: Քոլեջը նպատակ է դրել ապահովել ուսանողների կարողությունները, որպեսզի նրանք կարողանան ինքնակազմակերպվել և հաղթահարել ժամանակի ընթացքում ծագող մարտահրավերները»: Հարկ է նշել, որ առաքելությամբ կրթականծրագրերի առանձնահատկությունները չեն շեշտադրվել:

Քոլեջը կրթական ծրագրեր է իրականացնում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում: 1996թ.-ից իրականացնում է կրթական ծրագրեր «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններով: 2024 թ.-ից քոլեջն ընդլայնել է կրթական ծրագրերի ուղղությունները, ներդրվել են «Նախադպրոցական կրթություն», «Հաշվապահական հաշվառում», «Իրավագիտություն» կրթական ծրագրերը՝ առկա և հեռակա ուսուցմամբ: Նոր կրթական ծրագրերի ներդրմամբ պայմանավորված քոլեջը փոխել է նաև իր անունը՝ Հյուսիսային համալսարանի բժշական քոլեջից դառնալով Հյուսիսային համլսարանի քոլեջ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ Քոլեջում նշված կրթական ծրագրերը ներդնելու հնարավորությունը դիտարկել են՝ նկատի ունենալով այդ ուղղություններով հաստատության արդեն իսկ մարդկային և նյութական ռեսուրսների և հաստատված կապերի առկայությունը, ՈԱՇ-ի 5-րդ մակարդակից հետո շարունակական կրթության իրականացումը՝ բուհում եղած ռեսուրսների արդյունավետ կառավարմամբ: Սակայն դրա հետ մեկտեղ հաստատությունը նախքան կրթական ծրագրեր ներդնելը ձեռնարկել և իրականացրել է աշխատաշուկայի ուսումնասիրություններ և համանման ծրագրերի հետ համեմատական վերլուծություններ: Աշխատաշուկայի վերլուծություններում կարևորվել են նաև գործատուների պահանջները: Այդ ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ աշխատաշուկայում առկա է որոշակի բաց, որը հնարավոր է լրացնել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի համապատասխան կրթությամբ (մասնավորապես՝ իրավագիտության ուղղությամբ կրթական ծրագիրը ներդրվել է՝ հաշվի առնելով դատական կարգադրիչների բացն աշխատաշուկայում):

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջը չի հստակեցրել շրջանավարտների մրցակցային առավելությունը և առանձնահատկությունները՝ ըստ մասնագիտությունների: Նաև քոլեջը չի առանձնացրել ըստ մասնագիտությունների աշխատաշուկայի կարիքների բավարարման ուղղությունները, այդ թվում՝ կամընտրական

առարկաների ներդրման, ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների թեմաների ձևավորման գործընթացում:

Քոլեջը կրթություն է իրականացնում նաև օտարերկրյա ուսանողների համար: Սակայն այս հանգամանքին անդրադառնալով՝ պետք է նշել, որ որ քոլեջն ունի 4 օտարերկրյա ուսանող ավարտական կուրսում՝ «Քույրական գործ» մասնագիտությամբ: Այնուհետև շարունակականությունն ընդհատվել է տարբեր պատճառներով պայմանավորված՝ այդ թվում նաև օրենսդրական դաշտով պայմանավորված, ինչի արդյունքում քոլեջը վերանայել է այս ուղղությամբ առաջնահերթությունները և այժմ օտարերկրյա ուսանողների ներգրավվումը չի դիտարկվում առաջնային նպատակ:

Ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման համար կազմվել է 2023-2026թթ. ռազմավարական պլան ժամանակացույց, որում գնահատման առանցքային ցուցանիշներ սահմանված չեն, ակնկալվող արդյունքները ոչ միշտ են չափելի, առկա չեն սահմանված հստակ ընթացիկ արդյունքներ: Որպես ՌԾ մշակման համար վերլուծական հիմք քոլեջը դիտարկում է 2022թ.-ին իրականացված SWOT վերլուծությունը, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա չէ հստակ փոխկապակցվածություն վերլուծության և ժամանակացույցի միջև: Միաժամանակ, այդ փաստաթղթով նախանշված բոլոր թույլ կողմերը շարունակում են պահպանվել 2024թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունում:

Քոլեջն իր ինքնավերլուծությունում սահմանում է ներքին և արտաքին շահակիցներին, ըստ որի ներքին շահակիցներն են վարչական անձնակազմը, ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՌԾ մշակման գործընթացում արտահայտված չէ: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները կարևորում են քոլեջի դերը միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, ինչպես նաև մասնագիտությունների ուղղությունների ընդլայնման հնարավորությունները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ Քոլեջի և ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ: Քոլեջի՝ 2023-2026թթ.-ի ՌԾ-ի գնահատման համար հստակ մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի առաքելությունն ընդգծում է որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստումը՝ կենտրոնանալով ինչպես մասնագիտական, այնպես էլ փափուկ հմտությունների զարգացման վրա: Առաքելության այս ձևակերպումը համապատասխանեցված է ուսանողների՝ ապագա մարտահրավերներին դիմակայելու ունակությունների զարգացմանը, ինչը կարևոր է ժամանակակից աշխատաշուկային պատրաստ լինելու համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարող է վերանայել իր առաքելությունը՝ շեշտադրելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները և իր մրցակցային առավելությունը:

Դրական է, որ քոլեջը բազմաբնույթ մասնագիտություններով ընդլայնել է իր կրթական ծրագրերի ցանկը՝ ներառելով ոչ միայն ավանդական բժշկական, այլև հումանիտար և սոցիալ-տնտեսական ուղղություններ: Ընդորում, այդ ընդլայնումը հիմնավորված է հաստատության առկա մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով, ինչպես նաև

աշխատաշուկայի դիտարկմամբ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ շրջանավարտների մրցակցային առավելությունների հստակեցումն ըստ մասնագիտությունների կարող է նպաստել աշխատաշուկայում նրանց դիրքավորմանը, ինչպես նաև անդրադառնալ կրթական ծրագրերի բովանդակային արդիականացման վրա՝ հատկապես կամընտրական առարկաների ու հետազոտական ուղղությունների մշակման առումով:

Չնայած քոլեջի կողմից սահմանվել են ներքին և արտաքին շահակիցները, ՌԾ մշակման ընթացքում նրանց մասնակցությունն ու ներդրումը փաստացի թույլ է արտահայտվել: Փորձագիտական խումբը գտնում է, որ սա սահմանափակում է ծրագրի ներառական բնույթը և խոչընդոտում է շահակիցների միջոցով անհրաժեշտ ռեսուրսների, գաղափարների և գործընկերային հնարավորությունների ներգրավմանը: Այդուհանդերձ կարևոր է, որ շահակիցների շրջանում ընդգծված է քոլեջի դերը և կրթական ծրագրերի ընդլայնման հնարավորությունների կարևորումը, ինչը կարող է հիմք հանդիսանալ ապագա համագործակցային ռազմավարությունների ձևավորման համար:

Կարևոր է նաև, որ քոլեջը ռազմավարական ծրագիրը հիմնավորել է 2022թ. իրականացված SWOT վերլուծությամբ: Սակայն փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում վերլուծական հիմքի և ռազմավարական ծրագրի միջև հստակ փոխկապակցվածության բացակայությունն ու SWOT վերլուծությամբ ընդգծված թույլ կողմերի դեռևս հաղթահարված չլինելը: Նպատակային բարելավումների արդյունավետ գործընթաց իրականացնելու համար փորձագիտական խումբը կարևորում է հստակ պլանավորումը, չափելի արդյունքների և գնահատման ցուցիչների սահմանումը, մինչդեռ դրանց բացակայությունը խոչընդոտում է ռազմավարական նպատակների իրագործման մոնիթորինգի իրականացումը: Ավելին, ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները չեն կապվում ՌԾ նպատակների հետ, ինչը խանգարում է միասնական և համակարգված գործունեության իրականացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ արդյունավետության հստակ ցուցիչների սահմանումը թույլ կտա Քոլեջին ոչ միայն ընդգծել իր մրցակցային առավելությունները, այլև համակարգված կերպով վերահսկել ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը, հիմնավորել բարելավման նախաձեռնությունները և ապահովել արտաքին և ներքին շահակիցների համար թափանցիկություն և հաշվետվողականություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջի առաքելությունը համահունչ է Որակավորումների ազգային շրջանակին և արտացոլում է որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստման ուղղվածությունը, ռազմավարական ծրագրում սահմանվել են համապատասխան նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև կարևորելով կրթական ծրագրերի բազմազանեցումը, դրանց աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը և շահակիցների կողմից Քոլեջի դերի շեշտադրումը միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Քոլեջը գործում է Հյուսիսային համալսարան ՍՊԸ-ի կազմում: Հյուսիսային համալսարանի քոլեջի կառավարումն իրականացվում է Հյուսիսային համալսարանի ռեկտորի, Հյուսիսային համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովի, քոլեջի տնօրենի, Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցներին կառավարման մարմիններում ներգրավելու նպատակով Քոլեջը ձևավորել է կառավարման խորհուրդը՝ բաղկացած 10 հոգուց: Խորհրդի նախագահը Համալսարանի մասնակիցների ժողովի ներկայացուցիչն է: Կառավարման խորհրդում ներգրավված են վարչական աշխատակիցներ, դասախոսներ, գործատուներ և ուսանողներ (խորհրդակցական ձայնի իրավունքով):

Խորհրդի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը: Կառավարման խորհուրդը ձևավորվել է 2024 թ.-ին, և դեռևս 2 նիստ է անցկացվել, անդրադարձ չի կատարվել ռազմավարական նպատակներին և հաշվետվություններին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդում ներգրավված արտաքին շահակիցներն առավելապես աջակցում են պրակտիկաների կազմակերպմանը: Միաժամանակ դեռևս հարցեր չեն բարձրացվել դասախոսների և ուսանողների կողմից: Առանձին հարցեր ռեսուրսների հետ կապված, մասնավորաբար լաբորատոր նյութերի ձեռքբերում, գրականության համալրում և այլն, լուծում են ստանում նախքան Կառավարման խորհուրդ հասնելը:

Ըստ քոլեջի կազմակերպական կառուցվածքի՝ քոլեջը անմիջապես ենթակա է համալսարանի ռեկտորին, ինչպես նաև քոլեջի ԿԽ-ին, քոլեջի կազմում գործում է նաև մանկավարժական խորհուրդը: Քոլեջի կազմում ներառված այլ ստորաբաժանումներ, ենթակառուցվածքներ առկա չեն: Համալսարանի պաշտոնների անձնագրերի և այլ փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ համալսարանի ստորաբաժանումներն իրականացնում են պաշտոնի անձնագրերում ամրագրված համապատասխան գործառույթներ նաև քոլեջի մասով, սակայն այդ մասով հաշվետու չեն քոլեջի տնօրենին: Ստորաբաժանումների աշխատանքային պլանների, հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվեց, որ մի շարք ստորաբաժանումներ քոլեջի ուղղությամբ նաև գործառույթներ չեն պլանավորում և իրականացնում, մասնավորապես՝ Հետազոտությունների նորարարական ծրագրերի կենտրոն, Արտաքին կապերի բաժին և այլն:

Քոլեջը ռազմավարական պլանավորումն իրականացրել է միջնաժամկետ կերպով: Առկա են 2023-2026 թթ. ՌԾ և ՌԾ գործողությունների պլան փաստաթղթերը: Հարկ է նշել, որ որևէ գործողության շրջանակում քոլեջի տնօրենը որպես պատասխանատու հանդես չի գալիս, միայն շուրջ 5 գործողության շրջանակում այլ ստորաբաժանումների հետ քոլեջի ամբիոններն են նշվում որպես պատասխանատուներ: Ռազմավարական նպատակներին համապատասխան սահմանել են խնդիրներ, իսկ ՌԾ գործողությունների պլանում՝ նաև քայլեր: Յուրաքանչյուր գործողության համար նախատեսված է 1 քայլ, ընդ որում հաճախ յուրաքանչյուր խնդրի էլ համապատասխանում է 1 գործողություն, որոնք հիմնականում

ընդհանուր են, առկա են արդյունքներ, որոնք ոչ չափելի են (օրինակ՝ Բարելավված ընթացակարգեր, հանդիպումների մասնակցության թերթիկներ, արձանագրություններ, ուսանողական թվակազմի ավելացում, ունենալ արդիականացված էլեկտրոնային գրադարանային ծառայություններ և այլն): ՌԾ գործողությունների պլանում հիմնականում նշվում է քոլեջի բյուջե, որոշ դեպքերում նաև Դրամաշնորհային և այլ ծրագրեր, լրացուցիչ ֆինանսներ, համաֆինանսավորում: Մի շարք գործողությունների պարագայում ժամկետներ չեն նշվում կամ նշվում են 2023-2026 թթ., կամ՝ պարբերական: ՌԾ-ում նախատեսված է Ռազմավարական նպատակներն անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովման և դրանց բաշխման արդյունավետության տեսանկյունից ֆինանսական պլանավորման ներդնում, որը չի իրագործվել ՌԾ գործողությունների պլանում, առկա չէ նաև տարեկան ֆինանսական պլանավորման և ՌԾ պլանավորման փոխկապակցում: Միաժամանակ պարզվեց, որ մի շարք նպատակների ուղղությամբ դեռևս արդյունքներ առկա չեն, մասնավորաբար՝ հետազոտություն և զարգացում, հասարակական պատասխանատվություն և այլն: Մի շարք գործողությունների պարագայում նկատի չի առնվում քոլեջի առանձնահատկությունները: Օրինակ, 2023-2024 թթ.-ի համար նախատեսված դասախոսների խրախուսման համակարգի կատարելագործում գործողության շրջանակում նախատեսել են ուսումնասիրել բուհերի ՊԴ կազմի խրախուսման ձևեր ու մշակել նման համակարգ, սակայն քոլեջի համար դեռևս գործում է համալսարանի համար հաստատված համապատասխան կարգը, որը սահմանվել է ավելի քան 5 տարի առաջ: Առկա են արդյունքներ, որոնք չափելի են, սակայն նախատեսված ժամկետներում չեն իրագործվել, դրանց ուղղությամբ ռեսուրսներ չեն նախատեսվել, օրինակ՝ ՄՈՒՀ-ի աշխատողների և սովորողների շրջանում ակադեմիական շարժունության ընդլայնում՝ յուրաքանչյուր ուստարվա համար 2 փոխանակման իրականացում: Յուրաքանչյուր ուստարվա կտրվածքով առնվազն 5 տեսադասախոսությունների ստեղծում (ձեռքբերում), օտարերկրյա ուսանողների թվակազմի աճ և այլն:

Ստորաբաժանումների և քոլեջի աշխատանքային պլանների և հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հաճախ ըստ տարիների կրկնվող գործողություններ են, առկա չէ կապակցումը ՌԾ նպատակների, ՌԾ գործողությունների պլանի հետ: Միաժամանակ, անդրադառնալով հաշվետվություններին, պետք է նշել, որ դրանք կատարողականի ներկայացման բնույթ ունեն, որտեղ կրկնվում է ըստ պլանի նախատեսված գործողությունը, սակայն առկա չէ վերլուծություն և խնդիրների բարձրացում, որոնք ուշադրության արժանանային հաջորդ տարի: Ստորաբաժանումների պլաններն ու հաշվետվությունները ներկայացվում են ընդհանուր՝ չառանձնացնելով քոլեջի մասով գործընթացներ: Անդրադառնալով հաշվետվողականության համակարգին՝ պետք է նշել, որ ստորաբաժանումները և քոլեջը հաշվետվություն են ներկայացնում Որակի ապահովման վարչությանը (այսուհետ՝ ՈԱՎ), իսկ դրանց գնահատումը ՈԱՎ-ը իրականացնում է ըստ դեռևս մասնակի ներդրված ՊԻԳԲ ձևաթերթերի, որոնց արդյունքում, ինչպես պարզվեց փորձագիտական այցից, կարող է պատահականության սկզբունքով ընտրվել միայն մի գործողություն՝ գնահատումն իրականացնելու համար: Գնահատումն իրականացնելիս չեն տարանջատվում ստորաբաժանումների՝ քոլեջի մասով իրականացված գործողություններ: Քոլեջի տնօրենի աշխատանքային պլանում նախատեսված գործողությունները վերաբերում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, իսկ որպես կցված հիմքեր ներկայացված են դասամատյաններ, ուսանողների ընդունելության վերաբերյալ հրամաններ, ստուգման

գրքույկների հանձնման մատյաններ և այլն: Միաժամանակ քոլեջի հաշվետվությունը գնահատելիս ևս կարող է ընտրվել փորձնական 1 գործողություն:

Առկա չեն ՌԾ գործողությունների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ:

Անդրադառնալով քոլեջի ֆինանսական պլանավորմանը՝ հարկ է նշել, որ պլանավորումն ու հաշվետվողականությունը իրականացվում են համալսարանի հետ համատեղ 1 տարվա համար, չեն առանձնացվում քոլեջի մասով պլանավորումներ և ծախսեր: Փորձագիտական այցից պարզվեց, որ ղեկավար կազմի և պատասխանատուների համար դժվարություն է ներկայացնում քոլեջի մասով ֆինանսական տվյալների առանձնացնելը: Միայն այցի շրջանակներում հնարավոր եղավ առանձնացնել որոշ տվյալներ ծախսերի վերաբերյալ՝ քոլեջի դասախոսական կազմի համար նախատեսված աշխատավարձերը և պրակտիկաների կազմակերպման համար նախատեսված ծախսերը: Այլ ուղղություններով նաև չեն առանձնացվում տվյալներ ծախսերի վերաբերյալ, մասնավորաբար, լաբորատոր նյութերի, այլ նյութական ռեսուրսների ձեռքբերման և այլ ուղղություններով: Առկա չեն պլանավորումներ ըստ ՌԾ ուղղությունների: Քոլեջի ֆինանսական մուտքերը գլխավորապես (շուրջ 95-97%) առաջանում են ուսման վարձավճարներից: Իսկ 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի պարագայում, ուսման վարձավճարները ևս ներառելով, մուտքերը կազմում են 2023-2024 ուստարվա մուտքերի շուրջ 75 %-ը:

Ֆինանսական մուտքերի շուրջ 40-50%-ը տրամադրվում է դասախոսական կազմի աշխատավարձի վճարման համար, իսկ շուրջ 4-5%-ը՝ պրակտիկաների կազմակերպման համար, մյուս ուղղություններով քոլեջի համար ծախսերի առանձին տվյալները բացակայում են, այդ թվում՝ նաև տարածքի վարձակալման համար գումարը: Միաժամանակ, այցի շրջանակում, որոշակի մոտավոր հաշվարկով տրամադրվել է 2024-2025 ուստարվա նախահաշվի առանձնացված տվյալներ քոլեջի համար միայն նախատեսված ծախսերի մասով (մուտքերի վերաբերյալ տվյալները կրկին առկա չեն), ըստ դրա ծախսերի շուրջ 71.5%-ը ուղղված է աշխատավարձերին, շուրջ 24%-ը՝ վարձակալական վճարներին, շուրջ 3.5%-ը տնտեսական ծախսերին, իսկ մնացած շուրջ 1%-ը՝ գիտահետազոտական աշխատանքներին, ՈւԽ-ի հետ կապված, Որակի ապահովման գործընթացների, դասախոսների մասնագիտական որակների զարգացման և ներկայացուցչական ծախսեր: Նաև հարկ է նշել, որ 01.09.2024 թ.-ից 31.01.2025թ. ժամանակահատվածի փաստացի մուտքերը կազմում են պլանավորված ծախսերի շուրջ 42%-ը:

Անդրադառնալով ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրությանը՝ հարկ է նշել, որ այդ նպատակով ՈԱՎ-ը անցկացնում է հարցումներ, որոնց արդյունքները հիմնականում ներկայացվում են ընդհանրացված համալսարանի հետ միասին՝ չառանձնացնելով քոլեջի խնդիրները: Մասնավորաբար անդրադարձ է կատարված սանիտարահիգիենիկ խնդիրների, օդորակիչների, հեռավար դասընթացների անհետաքրքրության և այլ խնդիրների, կրկին առանձնացված չեն քոլեջի խնդիրները:

Իրականացվել է աշխատաշուկայի վերլուծություն, որտեղ անդրադարձ է կատարված տարբեր մասնագիտություններով թափուր աշխատատեղերին և այդ մասնագիտություններով գործատուների պահանջներին: Առկա է նաև տարբեր մասնագիտությունների համար փորձագիտական կարծիքներ: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ այս ուսումնասիրությունները դեռևս որոշումների կայացման հիմք չեն հանդիսացել:

Քոլեջի 2023-2026թթ. ռազմավարական ծրագրի, հայեցակարգի և համապատասխան գործողությունների պլանի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Առկա

է աշխատանքային խմբի կողմից իրականացված SWOT վերլուծության արդյունքներ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների, առկա չեն այդ վերլուծության համար հիմք հանդիսացած տվյալներ և վերլուծություններ: Ընդ որում հարկ է նշել, որ այդտեղ վերլուծությունը համընկնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար իրականացված ինքնավերլուծության (2024 թ.) արդյունքների հետ, բացառությամբ առանձին մասնակի որոշ օրինակների: Միաժամանակ հարկ է նշել, որ առկա են դեպքեր, երբ վերլուծությամբ ներկայացված խնդիրը համալսարանական է կամ չի կապակցվում տվյալ չափանիշի հետ կամ լիարժեք արտահայտված չեն տվյալ չափանիշի շրջանակներում թույլ կողմերը (մասնավորաբար՝ 2-րդ չափանիշի շրջանակում առանձնացվում է թույլ կողմ. ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի ժամանակավրեպություն: 6-րդ չափանիշի շրջանակներում ներկայացվում է թույլ կողմ. Բարձր վարկանիշով հանդեսներում տպագրված աշխատանքների փոքր քանակը և այլն): Առկա է նաև ՌԾ նպատակների, գործողությունների պլանի և այդ վերլուծությամբ ներկայացված խնդիրների փոխկապակցվածության խզում: Մասնավորաբար, ներկայացված չէ կազմակերպական կառուցվածքի խնդիր, սակայն նախատեսված է դրա բարելավման գործնթաց, ինչպես նաև ներկայացված է, որ Ուսումնական և գիտական հաստատությունների հետ համատեղ գիտական հետազոտություններ կատարելու փորձը բավարար չէ, սակայն այս ուղղությամբ ՌԾ-ում նախատեսված քայլեր առկա չեն և այլն:

Անդրադառնալով ՊԻԳԲ շրջափուլով գործընթացների իրականացմանը՝ հարկ է նշել, որ ՌԾ-ով քոլեջն ունի նախատեսված գործողություն՝ ՄՈՒՀ-ի բոլոր տիրույթներում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացման ապահովման գործընթացների շարունակականություն: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի համար մշակված քաղաքականությունները, կարգերն ու ընթացակարգերը դեռևս չեն վերանայվել, կամ հիմնականում առաջնորդվում են համալսարանի համար նախատեսված համապատասխան փաստաթղթերով: Տարբեր ուղղություններով գործընթացների մասով փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դեռևս առկա է խզում ՊԻԳԲ շրջափուլի փուլերի միջև, պահանջված չէ փուլերի հաջորդականությունը, սակայն փորձագիտական խումբը առանձնացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներին և այստեղ նկատելի է շրջափուլի առաջին երկու փուլերի փոխկապակցված իրականացում:

Համալսարանի կայքում առկա է համապատասխան բաժին, որտեղ տեղադրված են բժշկական 2 մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ ներառյալ մասնագիտական նպատակները, ուսումնական արդյունքները: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը նախաձեռնել է նաև շրջանավարտների լավ փորձերի ներկայացում քոլեջում որակավորումների մասին տեղեկատվության տրամադրման նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի կառավարումն իրականացվում է բազմաշերտ համակարգով՝ ներառելով համալսարանի կառավարման մարմինները և Քոլեջի կառավարման խորհուրդը: Սա հնարավորություն է տալիս համատեղել համալսարանի փորձը և ռեսուրսները Քոլեջի զարգացման համար: Սակայն կառավարման խորհրդի ներգրավվածությունն այս պահին սահմանափակ է ռազմավարական զարգացող գործընթացներում, ինչի հետևանքով Քոլեջի ռազմավարական նպատակները լիարժեք չեն քննարկվում և վերահսկվում կառավարման բարձր

մակարդակում: Խորհրդի ակտիվ մասնակցությունը կնպաստի ռազմավարական որոշումների կայացմանն ու զարգացման ուղղության հստակեցմանը:

Քոլեջի կառավարման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածությունն այժմ հիմնականում արտահայտվում է պրակտիկաների կազմակերպման մակարդակում: Նրանց ներգրավման ընդլայնումը ռազմավարական պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում թույլ կտա Քոլեջին առավել նպատակային ձևավորել կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին:

Քոլեջի ռազմավարական պլանավորումը կատարվում է միջնաժամկետ ձևաչափով, սակայն պլանավորման և իրականացման գործընթացները բավարար համակարգված չեն: Ռազմավարական պլանը չի ներառում հստակ չափելի արդյունքներ, ցուցիչներ և փուլային մշտադիտարկման մեխանիզմներ: Այս բացը խոչընդոտում է ռազմավարական նպատակների վերահսկող իրականացմանը և ժամանակին շտկող քայլերի ձեռնարկմանը: Հստակ ցուցիչների և ընթացիկ գնահատման մեխանիզմների ներդրումը անհրաժեշտ է՝ ռազմավարական ծրագրի իրագործելիությունը և Քոլեջի զարգացման օպերատիվ արձագանքը ապահովելու համար:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Ֆինանսական պլանավորումն իրականացվում է համալսարանի հետ համատեղ՝ առանց Քոլեջի մասով առանձին պլանների և ծախսերի հստակեցման: Սա խոչընդոտում է ռեսուրսների օպտիմալ բաշխմանը և Քոլեջի ֆինանսական կայունության գնահատմանը: Ֆինանսական հոսքերի և ծախսերի բաց և թափանցիկ հաշվետվության ապահովումը, ինչպես նաև ֆինանսական պլանավորումը ՌԾ հետ կապակցելը կուժեղացնի ֆինանսական կառավարումը և կնվազեցնի ֆինանսական կախվածությունը ուսման վարձավճարներից:

Քոլեջի ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները ներկայումս չեն կապվում ՌԾ նպատակների և գործողությունների հետ, ինչը թույլ չի տալիս ապահովել ռազմավարական և կարժաժամկետ պլանավորման մակարդակների արդյունավետ մեկտեղում: Պլանավորման և հաշվետվությունների համակարգման բարելավումը կնպաստի ամբողջ կառավարման համակարգի ավելի արդյունավետ գործարկմանը՝ հիմնվելով գնահատման հստակ ցուցիչների վրա, ինչը թույլ կտա ցույց տալ հաստատության մրցակցային առավելությունը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ ստորաբաժանումների հաշվետվությունները ներկայացվում են որպես կատարողական փաստաթղթեր՝ առանց վերլուծության և խնդիրների բացահայտման: Սա սահմանափակում է հետագա բարելավման հնարավորությունները: Վերլուծական հաշվետվությունների մշակումը և դրանց գնահատման գործընթացի հստակեցումը կոլեգիալության սկզբունքների կիրառմամբ թույլ կտա Քոլեջին վեր հանել խոչընդոտները և ձեռնարկել անհրաժեշտ բարելավման գործողություններ: Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ այժմ հաշվետվությունների գնահատման համար կիրառվող մոտեցումը արդյունավետ չէ և կարևոր է, որ քոլեջը գնահատի այս մեխանիզմի արդյունավետությունն ու վերանայի այսկերպ գնահատման իրականացման անհրաժեշտությունը:

Քոլեջը չի կիրառում տվյալահենք և վերլուծական մոտեցում ռազմավարական կառավարման մեջ: Ուսանողների և դասախոսների հարցումների արդյունքներն ամփոփվում են համալսարանի մակարդակում՝ առանց քոլեջի առանձնահատկությունների

վերլուծության։ Տվյալահենք կառավարման մշակույթի ներդրումը և վերլուծությունների հիման վրա որոշումների կայացումը կնպաստեն Քոլեջի կառավարման թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ռազմավարական պլանով նախատեսված է ՊԻԳԲ ամբողջական շրջափուլի ներդրում, սակայն ներկայումս այդ գործընթացը մասնակի է իրականացվում։ Քոլեջի քաղաքականությունները և ընթացակարգերը մեծապես շարունակում են հիմնվել համալսարանի փաստաթղթերի վրա՝ առանց Քոլեջի առանձնահատկություններին համահնչեցման։ Քոլեջի առանձնահատուկ կարիքներին համարժեք քաղաքականությունների և գործընթացների մշակումն ու ներդրումը կբարձրացնի ՊԻԳԲ շրջափուլի արդյունավետությունը։

Դրական է, որ Քոլեջի կայքում առկա է տեղեկատվություն կրթական ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև ձեռնարկվել է շրջանավարտների հաջողության պատմությունները ներկայացնելու նախաձեռնություն։ Սա կարևոր քայլ է՝ Քոլեջի ճանաչելիության բարձրացման և շրջանավարտների հաջողությունների միջոցով արտաքին ընկալումը բարելավելու համար։ Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է այս նախաձեռնությունը դարձնել համակարգված և ամբողջական՝ ներառելով նաև Քոլեջի ռազմավարական ուղղություններ և կրթական առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկտվության հասանելիության ապահովումը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջի կառավարման համակարգը դեռևս չի խթանում հաստատության ռազմավարական զարգացման բոլոր ուղղությունների համաչափ զարգացումը, պլանավորման և իրականացման գործընթացները չեն ապահովում սահմանված նպատակների ձեռքբերումը, հաշվետվությունները չեն կապակցվում ռազմավարական պլանավորմանը, ձևավորված կառավարման մարմինները դեռևս արդյունավետորեն չեն գործում, ռազմավարական զարգացման ծրագրում ցուցիչները սահմանված չեն, կարճաժամկետ պլանները չեն կապակցվում միջնաժամկետ պլանավորմանը, հստակ տվյալներ չեն հավաքագրվում կառավարչական որոշումների կայացման համար, վարչարարության գործընթացները դեռևս չեն իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլով, շնորհվող որակավորումների մասին հրապարակումների գնահատման մեխանիզմները դեռևս արդյունավետորեն չեն իրականացվում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**։

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

2016-2024թթ. Հյուսիսային համալսարանի քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացրել երկու մասնագիտությամբ՝ «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ»: 2024-2025 ուսումնական տարում ներդրվել են նոր մասնագիտություններ՝

«Նախադպրոցական կրթություն», «Հաշվապահական հաշվառում», «Իրավագիտություն»: Նոր ներդրված ծրագրերն իրականացվում են առկա և հեռակա ուսուցմամբ՝ համապատասխանաբար 2 և 3 տարի տևողությամբ:

Հյուսիսային համալսարանի քոլեջի ուսանողների թիվը 2024-2025 ուստարվա դրությամբ 109 է, որից 4-ը՝ օտարերկրյա: 26-ը նոր ներդրված մասնագիտությունների առաջին կուրսի ուսանողներն են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային ուսանողների ուսումնառության կազմակերպման համար առանձին ՄԿԾ-ներ մշակված չեն:

Նոր ծրագրերի ներդրումից առաջ Քոլեջի կողմից իրականացվել են աշխատաշուկայի ուսումնասիրություններ և համանման ծրագրերի հետ համեմատական վերլուծություններ: Օրինակ, 2024 թվականի սեպտեմբերին Քոլեջն իրականացրել է Հյուսիսային համալսարանի քոլեջի և Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, որի արդյունքում նախատեսվում է ավելացնել գործնական ժամերի քանակը:

Քոլեջն իրականացրել է նաև բենչմարքինգ Նիդերլանդների Ռադբաուդի նախահամալսարանական քոլեջի, ՀՀ Արդարադատության նախարարության Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի Քոլեջի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրերի հետ: Արդյունքում որոշվել է մշակել քոլեջի «Իրավագիտություն» մասնագիտության առանձնահատկությունները և կրթական վերջնարդյունքները ներառող ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, գնահատման կարգ:

Իրականացվել է նաև «Նախադպրոցական կրթություն» ծրագրի համեմատական վերլուծություն ՀՀ «Մխիթար Սեբաստացի» և ՌԴ Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Նեկրասովի անվան թիվ 1 մանկավարժական քոլեջի համապատասխան կրթական ծրագրերի հետ: Վերլուծության մեջ ընդգծված են Քոլեջի համար հնարավոր վտանգներ. օրինակ, կամընտրական առարկաների ոչ լայն ընտրությունը, պրակտիկայի ժամաքանակի սակավությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացված համեմատական վերլուծությունների արդյունքում ցտացված առաջարկները դեռևս ներդրման փուլում են: Այս ուղղությամբ քոլեջը նախատեսում է աշխատանքներ իրականացնել առաջիկայում:

Ծրագրերի ներդրման համար հիմք են հանդիսացել նաև արտաքին շահակիցներից ստացված արձագանքները, որոնք ներկայացնում են գործատուների պահանջները ապագա մասնագետների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների հանդեպ, ինչպես նաև այդ մասնագետների պահանջարկը աշխատաշուկայում, առկա թափուր տեղերի վերաբերյալ տվյալներ: Օրինակ՝ «Ատովմյան» փաստաբանական ընկերության հետ քննարկվել է միջին մասնագիտական որակավորում ունեցող մասնագետի պահանջարկը, աշխատանքի հնարավորությունները փաստաբանական, նոտարական գրասենյակներում, դատական համակարգում:

Անդրադառնալով բժշկական գործող ծրագրերին՝ հարկ է նշել, որ 2023 թվականին իրականացվել է բենչմարքինգ Հյուսիսային համալսարանի քոլեջի «Քույրական գործ» և Ֆինլանդիայի ESEDU քոլեջի համապատասխան ծրագրի միջև՝ նպատակ ունենալով համեմատել երկու կրթական ծրագրերը և խթանել ուսանողների շարժունությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ծրագրերի վերլուծությունն իրականացվել է առանց մասնագիտական կրթական ծրագրի պատասխանատուների, դասախոսների

մասնակցության, իսկ Ֆինլանդիայի ESEDU քոլեջի հետ կնքված պայմանագիրը դեռևս չի գործարկվել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ տեղի են ունենում մանկավարժական խորհրդի նիստերում, որի արդյունքում ժամային փոփոխություններ են արել «Քույրական գործը մանկաբարձությունում» մոդուլի շրջանակներում և գինեկոլոգիային նվիրված ժամերը փոփոխել են, ավելացրել են գործնական պարապմունքի ժամեր:

Քոլեջի դասախոսական կազմի երկու ներկայացուցիչ մասնակցել է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլներից բացի, ուսումնական պլաններում ներառված են նաև առարկաներ, որոնք ավելացվել են ընտրովի կամ պահուստային ժամերի հաշվին: Օրինակ՝ «Ընտանեկան բժշկություն» մոդուլը ներդրվել է՝ հաշվի առնելով ոլորտային մասնագետների արձագանքը և ուսանողների հետաքրքրվածությունը, քանի որ այս ուղղությամբ աշխատող բուժքույրերի պահանջարկը բարձր է:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նոր ներդրված կրթական ծրագրերի շրջանակում կամընտրական առարկաների վերաբերյալ հստակ պլանավորում դեռևս առկա չէ: Բացի այդ, ծրագրերում կամընտրական առարկաներ ընտրելիս չի իրականացվել աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ հստակեցնելու, թե շրջանավարտներն ինչ մասնագիտական առանձնահատկություններ և մրցակցային առավելություն են ունենալու:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, մասանգիտական և նախաավարտական: «Ատամնատեխնիկական գործ» և «Քույրական գործ» ծրագրերի ուսանողները պրակտիկայի են գնում յուրաքանչյուր կիսամյակում մեկ անգամ և ուսումնական տարվա ավարտին, համապատասխանաբար՝ 1, 2 և 4 շաբաթ տևողությամբ: Ուսումնական պրակտիկայի առաջին փուլի ընթացքում ուսանողներն առավելապես դիտորդի դերում են: Մասնագիտական և նախաավարտական պրակտիկաների ժամանակ «Քույրական գործ» մասնագիտության ուսանողներին հանձնարարվում են գործնական առաջադրանքներ, ինչպես օրինակ ներարկումների իրականացում, առաջին անհրաժեշտության դեղորայքի պայուսակի համալրում, ախտահանման պրոցեսներին մասնակցություն, բուժառուներին հետազոտությունների ուղեկցում, որոնք կատարում են մասնագետի հսկողությամբ: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանակներում ուսանողները պրակտիկայի վայրերում հնարավորություն են ունենում ծանոթանալու 3D մոդելավորման Cad/Cam ծրագրին, կերամիկայի թրծման փուլերին, շարժական պրոթեզների հավաքմանը: Բոլոր անհրաժեշտ նյութերը պրակտիկայի կենտրոնները տրամադրում են ուսանողներին:

Պրակտիկայի վերհասկման նպատակով Քոլեջը պրակտիկայի պատասխանատու է կցում յուրաքանչյուր խմբի:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պրակտիկաների անցկացման համար Քոլեջը պայմանագրեր է կնքել համապատասխան կառույցների հետ, այդ թվում նաև նոր ներդրված կրթական ծրագերի համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում առկա չէ: Քարտեզագրումների ուսումնասիրությունից և դասալսումներից պարզ դարձավ, որ

դասախոսներն առավելապես օգտագործում են դասախոսության, հարցուպատասխանի, անհատական և խմբային աշխատանքի մեթոդները: Դասախոսները կիրառում են նաև էլեկտրոնային ուսումնառության նյութեր, տեսանյութեր, դիդակտիկ պարագաներ, արհեստական բանականությամբ կազմված թեստեր և իրավիճակային խնդիրներ:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասախոսները կարևորում են ուսանողների մոտ ձեռքի հմտությունների ձևավորումը, որի համար ուսանողներին հնարավորություն էր տրվում բազմակի անգամ կրկնել գործնական աշխատանքը հմտությունը լիարժեք ձևավորելու համար: Դասալսումներից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ «Քույրական գործ» ՄԿԾ-ի ուսանողները հնարավորություն ունեն ձեռքի հմտությունները զարգացնել մույլաժների կիրառմամբ (օրինակ, կար դնել, ներերակային, միջմկանային ներարկումներ կատարել, առաջին օգնություն ցուցադրել և այլն), իսկ ատամնատեխնիկները՝ լաբորատորիայում գործնական պարապմունքների ընթացքում չափսից մոդելներ ստանում, գիպսով ձևավորում, հղկում, հարթեցում, ինչպես նաև կատարում են մետաղի փայլեցում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներին թույլատրվում է փորձել կատարել համապատասխան աշխատանքներն այնքան, մինչև կկարողանան իրականացնել, սակայն առաջադրանքների կատարման նվազագույն քանակ, որը բավարար է ձեռքի հմտությունը ձևավորելու համար, քոլեջի կողմից սահմանված չէ:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողներին հանձնարարվում են ռեֆերատային աշխատանքներ: Դրանց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները հղումներ հիմնականում չեն կատարում հավաստի մասնագիտական գրականությանը կամ էլեկտրոնային աղբյուրներին, նրանց համար որպես տեղեկատվական հիմք ծառայում են ոչ ակադեմիական աղբյուրները: Քոլեջի կողմից դեռևս չի սահմանվել հստակ պահանջ հղումներ կատարելու, վերլուծություն և եզրահանգումներ իրականացնելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերլուծական, ինքնուրույն առաջադրանքները հստակորեն արտացոլված չեն կրթական ծրագրերում, դրանց կատարման պահանջները և գնահատման չափանիշները ևս սահմանված չեն:

Ուսանողների գնահատումն իրականացվում է «Հյուսիսային համալսարանի քոլեջի ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, գնահատման կարգ»-ի համաձայն: Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել տեսական և/կամ գործնական: Օրինակ, «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներին տրվում է առաջադրանք ներկայացնելու կոմբինացված պսակները, համապատասխան դրոշմից ստանալու մոդել, ձուլման կամ դրոշմահատման եղանակով ստանալու մետաղական հենքը, մոմով վերականգնելու ատամի անատոմիական տեսքը, քողարկել մետաղը, կատարել պոլիմերիզացիա, մշակել, փայլեցնել, հարմարադրել մոդելին:

Անդրադառնալով ուսանողների գիտելիքների ստուգմանը՝ հարկ է նշել, որ ուսանողներին տրվում են թեստեր, գրավոր առաջադրանքներ և անցկացվում է բանավոր հարցում, որոնք որոշ առարկաների դեպքում կիրառվում են նաև գործնական հմտությունները ստուգելու համար:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են բանավոր քննությամբ, ընդ որում ընթացիկ գրավոր, բանավոր կամ գործնական գնահատումը չի ազատում ուսանողին ամփոփիչ բանավոր ստուգարքից:

Քոլեջում ընթացիկ գնահատումն իրականացվում է 10-միավորանոց սանդղակով, սակայն գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն:

Դասալսումներից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ոչ միշտ են մեկնաբանվում նշանակված գնահատականները: Այսուհանդերձ, դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին և պատասխանելու նրանց հարցերին այդ թվում նաև էլեկտրոնային հարթակներում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները հնարավորություն ունեն գնահատականը բողոքարկելու սահմանված կարգի համաձայն: Գնահատականի բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում պրակտիկայի վայրի պատասխանատուի և Քոլեջից կցված պատասխանատուի կողմից: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված են «Ուսանողների պրակտիկաների կազմակերպման կարգ»-ում: Պրակտիկայից հետո ուսանողը ներկայացնում է նաև հաշվետվություն: Պրակտիկայի օրագրերը պարունակում են նաև պրակտիկայի պլանը:

Ամփոփիչ ատեստավորումների տոմսերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Նման մոտեցումը ընդունված է առայժմ բժշկական մասնագիտությունների համար, քանի որ մյուս մասնագիտություններում դեռ միայն առաջին կուրսեր ունեն:

Նախաավարտական ատեստավորման տոմսերը պարունակում են 3 տեսական հարց և մեկ իրավիճակային խնդիր, իսկ ավարտական ատեստավորման տոմսերը՝ 3 տեսական հարց և 1 գործնական առաջադրանք, որի ընթացում ատամնատեխնիկները ներկայացնում են ուսումնառության ընթացքում կատարած աշխատանքները և մեկնաբանում դրանք, իսկ «Քույրական գործ» մասնագիտության պարագայում՝ որոշ գործնական հմտություններ ցուցադրում են մույլաժների վրա:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները ներկայացնում են հաշվետվություններ, որոնք, սակայն, ոչ միշտ են պարունակում վերլուծություններ և առաջարկներ, հաճախ տարեցտարի դրանք կրկնվում են:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, տեսական գիտելիքները և գործնական հմտությունները և դրանց համաչափ զարգացումը ուսանողների մոտ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման համար համընդհանուր մեխանիզմ առկա չէ: Կան առանձին մեխանիզմներ. դասալսումներ և որակի ապահովման վարչության կողմից անցկացվող հարցումներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ, որոնք կրթական ծրագրերի բովադակության վերաբերյալ խնդիրներ չեն վեր հանել և դեռևս հիմք չեն ծառայել ՄԿԾ-ների վերանայումների և բարելավումների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից նոր մասնագիտությունների ներդրումը նպաստում է կրթական ուղղությունների առաջարկի ընդլայնմանը, ուսանողների մասնագիտական ընտրության հնարավորությունների բազմազանեցմանը:

Քոլեջի կողմից աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ քննարկումները նպաստել են նոր ներդրվող մասնագիտությունների համար շրջանավարտների

զբաղվածության ուղղությունների հստակեցման, պրակտիկաների վայրերի ուղղությունների ձևավորմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ պարբերական քննարկումները թույլ կտան կրթական ծրագրերը ավելի նպատակային ուղղորդել աշխատաշուկայի պահանջներին՝ խթանելով շրջանավարտների մրցունակությունը և զբաղվածության հնարավորությունները:

Բենչմարքինգի գործընթացի կիրառումը, ներառյալ միջազգային գործընկերների հետ համեմատությունները, ստեղծում են լավ հիմք կրթական ծրագրերի արդիականացման և միջազգայնացման մակարդակի բարձրացման համար: Մասնավորապես, համադրելով միջազգային լավագույն փորձը, հնարավոր կլինի ուսումնական բովանդակությունը հարստացնել գործնական բաղադրիչով, ապահովելով ուսանողների շարժունության ընդլայնում և կրթական միջավայրի գրավչության ավելացում:

Միևնույն ժամանակ, բենչմարքինգի արդյունքների լիարժեք ինտեգրումը կրթական ծրագրերի մեջ և դասախոսական կազմի առավել ակտիվ մասնակցությունն այս գործընթացին կարող են խթանել կրթական ծրագրերի արդիականացումը և նպաստել դասընթացների գործնական բաղադրիչի ամրապնդմանը՝ խթանելով ուսուցման արդյունավետությունը:

Քոլեջի բժշկական ծրագրերում իրականացված բենչմարքինգը նույնպես կարևոր ուղենիշ է կրթական ծրագրերի զարգացումն ապահովելու համար: Սակայն գործընթացի ամբողջականության և արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել մասնագիտական կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը՝ ինչը կապահովի ուսումնառության բովանդակության ավելի թիրախային բարելավում և կիրառելիության բարձրացում:

Ուսումնական պլաններում ընտրովի և պահուստային ժամերի հաշվին ներդրված մոդուլները ուսանողներին հնարավորություն են տալիս մասնագիտանալ համապատասխան ոլորտում և ավելացնել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող հմտությունները: Սակայն կամընտրական առարկաների պլանավորման և դրանց կառուցման գործընթացում աշխատաշուկայի պահանջների լիարժեք ուսումնասիրությունը կընդլայնի շրջանավարտների մրցակցային առավելությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ պրակտիկայի տարբեր ձևերի արդյունավետ կազմակերպումը և վերահսկողության գործընթացի իրականացումը խթանում են ուսանողների գործնական հմտությունների զարգացումը և մասնագիտական ինտեգրումը՝ հեշտացնելով ուսումնառության ընթացքում աշխատաշուկայում պահանջված հմտությունների ձևավորումը:

Դասավանդման մեթոդների բազմազանությունը, ներառյալ էլեկտրոնային ուսուցման միջոցների կիրառումը և գործնական աշխատանքի բազմակի կրկնության հնարավորությունը, խթանում են ներգրավվածությունը: Դրական հանգամանք է պրակտիկ փորձառությամբ դասախոսական կազմի կողմից գործնական կարողությունների զարգացմանը միտված առաջադրանքների տրամադրումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործնական առաջադրանքների համար նվազագույն պահանջների, հմտությունների ձևավորման համար կատարման սահմանումը կնպաստի ուսանողների գործնական հմտությունների հետևողական զարգացմանը և ուսուցման արդյունքների հավասարաչափ ապահովմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է բոլոր մասնագիտությունների ուղղությամբ առաջադրանքների բազաների, գնահատման թերթիկների ձևավորման

անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա կրթական ծրագիրը դարձնել ավելի պլանավորված, ապահովել ուսանողների կարողությունների աստիճանական զարգացումը:

Ակադեմիական ազնվության ապահովման, հետազոտական աշխատանքների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով՝ փորձագիտական խումբը կարևորում է նաև ուսանողների աշխատանքներում հավաստի մասնագիտական գրականությանը հղումների և վերլուծական մոտեցման պահանջների սահմանումը, ինչը կխթանի ուսանողների քննադատական մտածողության, հետազոտական հմտությունների ձևավորումը:

Ուսանողների գնահատման գործընթացում հստակ չափանիշների սահմանման և գնահատականների մեկնաբանման պարտադիր կիրառումը կնպաստի գնահատման և ուսանողների հետադարձ կապի արդյունավետության բարձրացմանը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծությունը, դրանց հենքով կրթական ծրագրերում փոփոխությունների իրականացումը կարող են խթանել կրթական ծրագրերի շարունակական բարելավումը՝ թույլ տալով բացահայտել, շտկել թերությունները և տարածել լավագույն փորձը: Այս համատեքստում, փորձագիտական խումբը գտնում է նաև, որ քոլեջում ՄԿԾ-ների համապարփակ մշտադիտարկման համակարգի ներդրումը կդառնա կրթական ծրագրերի շարունակական զարգացման և որակի ապահովման կարևոր գործիք:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի կրթական ծրագրերը համահունչ են ՈԱՇ-ի պահանջներին, պրակտիկ փորձ ունեցող դասավանդողների դիտարկումների հիման վրա ներդրվել են ընտրովի առարկաներ, աշխատաշուկայում կիրառվող նոր մոտեցումները ներդրվում են կրթական ծրագրերում, դասախոսների կողմից կիրառվում են դասավանդման բազմապիսի մեթոդներ, ուսանողներին տրվում են գործնական կարողություններն ու ձեռքի հմտությունները ձևավորող և գնահատող առաջադրանքներ, պրակտիկայի շրջանակներում ուսանողները հնարավորություն են ունենում մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով ծանոթանալու կիրառվող ծրագրերին, ամփոփիչ ավարտական քննությունների շրջանակներում գնահատվում են նաև ուսանողների գործնական կարողությունները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Հյուսիսային համալսարանի քոլեջի ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված մի շարք միջոցառումներ. փետրվար–մայիս ժամանակահատվածում քոլեջի կողմից իրականացվում է գովազդային նյութերի տարածում, կազմակերպվում են այցելություններ տարածաշրջանի դպրոցներ, տարածվում են տեղեկատվական բուկլետներ, պարբերաբար իրականացվում են

աշակերտների ճանաչողական այցեր, հանդիպումներ են կազմակերպվում աշակերտների հետ, որոնց ժամանակ տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն Քոլեջի մասնագիտությունների վերաբերյալ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հաճախ քոլեջի մասին իրազեկվում են նաև իրենց ծանոթներից, ընկերներից։ Քոլեջն ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմներ է համարում նաև ֆեյսբուքյան էջը և կայքէջը։ Հարցումների արդյունքների վերլուծության համաձայն՝ 2023-2024 ուստարում առաջին կուրսի ուսանողների շուրջ 56,4%-ը քոլեջի մասին իրազեկվել է սոցցանցերից։ Օտարերկրյա ուսանողներին իրազեկելու համար քոլեջը համագործակցում է օտարերկրյա գործակալների հետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են հիմնականում տնօրենը, արտաքին կապերի բաժնի աշխատակիցները, իսկ ընդհանուր գործընթացը համակարգում է բաժնի ղեկավարը կամ ռեկտորի հրամանով ձևավորված հատուկ ընդունող հանձնաժողովը։ 2024-2025թթ. դրությամբ քոլեջի ուսանողների թիվը ավելացել է 47-ով, ինչը պայմանավորված է քոլեջում ներդրված նոր մասնագիտություններով, մասնավորապես՝ «Իրավագիտություն», «Հաշվապահական հաշվառում» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտություններով։

Քոլեջում բժշկական մասնագիտությունների ընդունելությունն իրականացվում է «Կենսաբանություն» առարկայից մասնագիտական քննության միջոցով։ Մյուս կրթական ծրագրերում ընդունելությունը տեղի է ունենում առանց քննությունների՝ ավարտական վկայականի գնահատականների հիման վրա։

Օտարերկրյա ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի համաձայն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների լեզվաիմացության մակարդակի գնահատում քոլեջը չի իրականացնում։ Դասալսումներից պարզ դարձավ, որ օտարերկրյա ուսանողներն ունեն լեզվաիմացության տարբեր մակարդակներ։ Ներկայումս քոլեջն ունի ավարտական կուրսում սովորող օտարերկրացի 4 ուսանող «Քույրական գործ» մասնագիտությունում (ընդունված՝ 2022-2023 ուստարում)։ Հաջորդող տարիներին քոլեջ ընդունված օտարերկրյա 36 ուսանողները չեն շարունակել իրենց ուսումնառությունը՝ հեռացվելով հիմնականում չհաճախելու պատճառով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համապատասխան թվաքանակ ապահովելու և խումբ ձևավորվելու պարագայում քոլեջը պատրաստակամ է կրկին իրականացնել կրթություն օտարերկրացիների համար, սակայն հավաքագրման ու ընդունելության խթանման աշխատանքներ ներկայումս չեն պլանավորվում։

Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 109 ուսանող։ Քոլեջը նաև մասնաճյուղ ունի Ալավերդիում, որտեղ 2024-2025 ուստարում սովորում է 15 ուսանող։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ալավերդիի բաժանմունքում ընդունելություն այլևս չի պլանավորվում ներկայումս սովորող բոլոր ուսանողների ավարտելուց հետո բաժանմունքի գործունեության դադարեցման նպատակով։

Վերլուծելով ուսանողների հեռացումների վերջին 5 տարիների տվյալները՝ հարկ է նշել, որ 2023-2024 ուստարում հեռացվել է ուսանողների 8.4%-ը, վերականգնումների տոկոսը 2-3%-ի միջակայքում է։ Ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են

հանդիսացել պայմանագրային պահանջների խախտումը, ՀՀ-ից դուրս մշտական բնակության մեկնելը, երկրից երկարաժամկետ բացակայելը, աշխատանքի և ուսուցման հետ անհամատեղելիությունը, ուսման անբավարար առաջադիմությունը: Վերջին 5 տարիների ընթացքում Քոլեջից հեռացված ուսանողների ընդհանուր թիվը 51 է: Օտարերկրյա ուսանողների հեռացման պատճառներն են դասերին չհաճախելը, կացության և սոցիալական խնդիրները: Անբավարար առաջադիմության հիմքով հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջի դասախոսները փորձում են աջակցել ուսանողներին նրանց հարցերին պատասխանելու միջոցով:

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում խորհուրդներում ուսանողների ներգրավվածությունը, ՈՒԽ-ի և Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի գործունեությունը, ՈԱ վարչության կողմից կազմակերպվող խմբային քննարկումները, հարցումները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացված հարցումների արդյունքում վերհանված խնդիրները վերաբերում են հիմնականում լսարանային պայմանների, ջեռուցման բարելավմանը: Ուսանողների շրջանում անցկացված հարցման արդյունքում վերհանվել է նաև խնդիր՝ կապված էլեկտրոնային գրականության հասանելիության և տեղեկացվածության հետ: Հարկ է նշել նաև, որ ՈԱ վարչությունը օտարերկրյա ուսանողների կարիքների վերհանման նպատակով իրականացնում է հարցումներ օտար լեզվով և որի արդյունքում վերհանված խնդիրները վերաբերում էին՝ ուսանողների համար ինտերնետային կապի և այլ ուսումնական հարմարությունների բացակայությանը կամ սակավությանը, քոլեջում տեղի ունեցող գործընթացներին իրենց քիչ ներգրավմանը, տեղացի ուսանողների հետ հաղորդակցման խնդիրներին՝ օտար լեզվի չիմացության պատճառով: Քոլեջում օտարերկրյա ուսանողների ակտիվ ներգրավվածությունը գործընթացներին ապահովելու համար պարբերաբար կազմակերպվում են մշակութային միջոցառումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ուսումնառության արդյունավետությանը նպաստելու համար քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ և լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ: Նախաքննական խորհրդատվությունների համար քոլեջում հստակ ժամանակացույց առկա չէ, իսկ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ կազմակերպվում են հիմնականում միջանկյալ և ամփոփիչ քննություններից առաջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին յուրաքանչյուր խմբի համար սոցիալական տարբեր հարթակներում ձևավորված խմբերում, դասերից բացակայելու դեպքում հաջորդող դասընթացների ընթացքում դասախոսները ևս անդրադառնում են ուսանողների հարցերին ու դժվար հաղթահարելի խնդիրներին:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում:

Վարչական անձնակազմին դիմելու ժամանակացույց քոլեջում առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Սակայն, ինչպես պարզ դարձավ ուսումնասիրություններից, ուսանողները հիմնականում՝ մինչև վարչական կազմին դիմելն իրենց հարցերի պատասխանները ստանում են կուրսղեկների միջոցով:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում գործում է Շրջանավարտների կարիերայի և պրակտիկայի կենտրոնը: Շրջանավարտների

կարիերայի և պրակտիկայի ստորաբաժանումը կազմակերպում է մի շարք միջոցառումներ և հանդիպումներ ուսանողների մասնակցությամբ նրանց մոտ փափուկ հմտությունների զարգացման նպատակով: Այսպես օրինակ՝ կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ճիշտ և վստահ հարցացրույց. կարիերայի առաջին քայլերը» միջոցառումը, որին ակտիվ մասնակցություն են ունեցել քոլեջի ուսանողները:

Քոլեջը կնքել է շուրջ 16 համաձայնագրեր և պայմանագրեր հաստատությունների հետ պրակտիկաների կազմակերպման և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ կենտրոնը պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Շրջանավարտների կարիերայի և պրակտիկայի բաժնի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարիերայի պատասխանտուի օժանդակությամբ: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2022-2023թթ. դրությամբ 32 շրջանավարտների 28%-ը աշխատում են, որից 13%-ը իրենց մասնագիտությամբ, 15%-ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, 19%-ը ուսումը շարունակել է ԲՈՒՀ-ում, 13%-ը զորակոչվել է բանակ, մյուսները գործազուրկ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար համալրումէ շրջանավարտների բազան, տվյալները լրացվում են շրջանավարտների՝ քոլեջն ավարտելուց անմիջապես հետո:

Քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին՝ ՈՒԽ-ն, որն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները: ՈՒԽ-ն նիստերին քննարկում և պլանավորում է նախատեսվող միջոցառումների թեման, կազմակերպման ընթացքը, մասնակիցներին և այլն: Օրինակ՝ ՈՒԽ նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվել են ամանորյա միջոցառումներ, ինտելեկտուալ քննարկումներ, մրցույթներ, վիկտորինաներ և այլն: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, ՈՒԽ աշխատանքների մասին իրազեկման գործընթացները ուսանողների շրջանում պասիվ են: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈՒԽ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել:

Քոլեջում ՈՒԽ-ի հետ մեկտեղ գործունեություն է ծավալում նաև ՈՒԳԸ-ն, որում ներգրավված ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու համալսարանի գիտաժողովներին և սեմինարներին: Փորձագիտական ուսումնասիրություններից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելուն ուղղված մեխանիզմներ քոլեջում ներդրված չեն: Հետազոտական որոշ տարրեր առկա են ուսանողների ինքնուրույն, ռեֆերատային աշխատանքներում, սակայն քոլեջը դեռևս չի հստակեցրել հետազոտական աշխատանքների ուղղությունները, գնահատման չափանիշները: Աշխատանքներում բացակայում են վերլուծություններն ու եզրահանգումները:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է ուսանողների շրջանում ՈԱ վարչության կողմից անցկացվող հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների

կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում էին քոլեջի ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության սակավությանը: Հարկ է նշել, որ հարցումները համատեղ իրականացվում են բուհի և քոլեջի ուսանողների համար՝ չառանձացնելով քոլեջի ուսանողների կարիքներն ու առաջարկները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու ուսանողների կայուն հոսք, բարձրացնում է հաստատության ճանաչելիությունը դիմորդների շրջանակում: Այս աշխատանքները խթանում են քոլեջի գործունեության շարունակականությունը և կարող են նպաստել նոր մասնագիտությունների ներդրմամբ ուսանողական կազմի ընդլայնմանը:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների առկայությունը խթանում է կրթական միջավայրին առնչվող որոշ խնդիրների վերհանումը, իսկ արձանագրված կարիքների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի պարբերական իրականացումը կնպաստի ուսանողների գոհունակության և բարելավման ուղղությամբ առաջարկների իրականացման ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպումը և նախաքննական խորհրդատվությունները նպաստում են ուսանողների առաջադիմությանը և ուսման արդյունավետությանը, իսկ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ աջակցություն տրամադրելը կարող է նպաստել ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրյա ուսանողների համար հնարավորությունների ստեղծմանը՝ միջազգային ծրագրերում և աշխատաշուկայում մրցունակ դառնալու տեսանկյունից:

Ուսանողների ազատ հաղորդակցությունը վարչական աշխատակազմի, ինչպես նաև կուրսղեկների և այլ ստորաբաժանումների հետ նպաստում է ուսանողներին հուզող խնդիրների օպերատիվ լուծմանը և ընդհանուր ուսանողական աջակցման միջավայրի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Շրջանավարտների և պրակտիկայի կենտրոնի իրականացրած նախաձեռնությունները նպաստում են ուսանողների կարիերայի զարգացմանը, գործատուների հետ կապի հաստատմանը և շրջանավարտների զբաղվածության խթանմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ շրջանավարտների հետագծի ուսումնասիրման պարբերականության հստակեցումը կնպաստի տվյալների վերլուծության ամբողջականությանը և կրթական ծրագրերի բարելավմանը:

ՈւԽ-ի գործունեությունը կարևոր դեր ունի ուսանողական ինքնակառավարման և ակտիվ մասնակցության խթանման հարցում, սակայն հաստատությունն անհրաժեշտություն ունի քայլեր ձեռնարկելու Խորհրդի մասին իրազեկվածության բարձրացման նպատակով, ինչը կնպաստի ՈւԽ-ի դերի բարձրացմանը և ուսանողների կարիքների վերհանմանը:

ՈՒԳԸ-ի առկայությունն ու ուսանողների՝ գիտաժողովներին մասնակցությունը ձևավորում են հետազոտական աշխատանքներում ներգրավվելու հետաքրքրություն, սակայն հետազոտական հստակ ուղղությունների և գնահատման չափորոշիչների բացակայությունը սահմանափակում է այդ ներուժի զարգացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողական աշխատանքների որակի բարձրացման համար անհրաժեշտ է

կառուցվածքային մոտեցում՝ մեթոդական աջակցության և հետազոտական կարողությունների զարգացման ուղղությամբ։

Քոլեջում կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման գործող մեխանիզմները դրական ազդեցություն են ունենում կարիքների վերհանման ուղղությամբ, սակայն ուսանողների՝ քոլեջում մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության պակասը և հարցումների համատեղ իրականացումը, որտեղ մեկտեղվում են բուհի և քոլեջի ուսանողների կարիքները՝ առանց առանձնահատկությունների ու մասնագիտությունների տարանջատման, բարդացնում են քոլեջի ուսանողների կարիքների ամբողջական վերհանումը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հստակ մեխանիզմներ դիմորդների հավաքագրման և ուսանողների ընդունելության իրականացման համար, առկա են կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, դասախոսական և վարչական կազմը պատրաստակամ է աջակցելու ուսանողներին, հաստատությունը քայլեր է իրականացնում ուսանողների և շրջանավարտների կարիերային աջակցելու ուղղությամբ, քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ ուսանողներին քոլեջի աշխատանքներում ներգրավելու և նրանց իրավունքները պաշտպանելու նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**։

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Հաստատությունն իր 2023-2026թթ. ռազմավարական ծրագրով նպատակադրել է անձնակազմը համալրել անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով և զարգացնել կադրային ներուժը։ Ըստ ՌԾ-ի՝ քոլեջը նախատեսել է շարունակել կրթական գործընթացների կազմակերպման համար երիտասարդ դասախոսների և բարձր որակավորում ունեցող անձնակազմի ներգրավման գործընթացը, մանկավարժադասախոսական և վարչական կազմի մասնագիտական հմտությունների և որակավորման մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը, կատարելագործել վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերը։

Անդրադառնալով դասախոսական կազմի համալրմանը՝ հարկ է նշել, որ քոլեջը դասախոսական կազմի համալրումն իրականացնում է՝ հիմք ընդունելով 2022թ. հաստատված համալսարանի ՊԴ կազմի և մանկավարժական աշխատողների մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը։ Դասախոսական կազմի համալրման համար նախատեսված պահանջները սահմանված են նաև պաշտոնների նկարագրերով։ Յուրաքանչյուր տարվա համար թափուր հաստիքների համալրման նպատակով հայտարարվում է մրցույթ, որի անցկացման մասին հայտարարությունը

հրապարակվում է համալսարանի կայքէջում և սոցիալական հարթակներում: Դասախոսների ընտրության համար հիմք են հանդիսանում դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումը կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում վերջին 10 տարվա ընթացքում 2 տարվա տվյալ մասնագիտությամբ աշխատանքային փորձը կամ վերջին 5 տարվա ընթացքում տվյալ մասնագիտությամբ վերապատրաստման վկայականի առկայությունը՝ ՀՀ ԿԳՄՍՆ երաշխավորված ուսուցման ծրագրով:

Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսների ընտրության համար առանձնացված պահանջներ առկա չեն: Մրցույթի անցկացման համար ձևավորված հանձնաժողովը թեկնածուի հետ անցկացնում է հարցազրույց, և մրցույթը հաղթած թեկնածուի հետ կնքվում է պայմանագիր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին մեկ տարում մրցութային կարգով ընտրվել է մեկ դասախոս:

Մրցութային փաթեթների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջում դասավանդում է 41 դասախոս, որոնք բոլորն ունեն բարձրագույն կրթություն: Քոլեջն ունի 23 հիմնական և 18 համատեղող դասախոսներ: Բժշկական մասնագիտությունների ուղղությամբ օտարերկրյա ուսանողներից ձևավորված խմբերում դասավանդելու համար լրացուցիչ պահանջ է նաև անգլերենի իմացությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտարալեզու խմբերում անգլերեն մասնագիտական առարկաներ/մոդուլներ պարապող դասախոսների թիվը 2024-2025 ուստարում 3 է:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ նոր ներդրված մասնագիտությունների ուղղությամբ քոլեջը մասնագիտական մոդուլների ուղղությամբ համալրումն իրականացնելիս օգտվում է նաև համալսարանի դասախոսական կազմի ռեսուրսներից, իսկ հանրակրթական բլոկի ուղղությամբ ներգրավվել է նոր կադրեր: Հարկ է նշել, որ բժշկական մասնագիտությունների ուղղությամբ մասնագիտական մոդուլները դասավանդում են պրակտիկ փորձ ունեցող դասախոսները:

Դասախոսները դասավանդում են նվազագույնը մեկ, առավելագույնը 7 մոդուլ /առարկա: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավաղվող մոդուլներին/առարկաներին, չնայած կան նաև անհամապատասխանության օրինակներ: Մասնավորապես՝ անասնաբույժ/տոքսիկոլոգի որակավորում ունեցող դասախոսը դասավանդում է Հաղորդակցություն մոդուլը, Ինժեներ էլեկտրիկի որակավորում ունեցող դասախոսը դասավանդում է Հանրահաշիվ և Երկրաչափություն, Տնտեսագետ /գյուղատնտեսության կազմակերպիչը դասավանդում է Ինֆորմատիկա և Համակարգչային օպերատորություն:

Դասախոսական կազմի գնահատման նպատակով քոլեջում իրականացվում են դասալսումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների ժամանակացույց քոլեջը չունի: Մանկավարժական խորհրդի քննարկումների արդյունքում որոշվել է յուրաքանչյուր դասախոսի մոտ իրականացնել կիսամյակային երկու դասալսում, սակայն ըստ իրենց ծանրաբեռնվածության դասախոսները փորձում են ամսական մեկ անգամ իրականացնել նաև փոխադարձ դասալսումներ: Դասալսումների թերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասալսումների ընթացքում անդրադարձ է կատարվում ժամանակի ճիշտ բաշխմանը, դիդակտիկ պարագաների օգտագործմանը, ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման օբյեկտիվությանը, թափանցիկությանը: Դասալսումների վերլուծություններ քոլեջի կողմից չեն իրականացվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնային նիստերի, ցիկլային հանձնաժողովների քննարկումների շրջանակում: Դասալսումների արդյունքում բացահայտված խնդիրները հիմնականում վերաբերում են մեթոդական պատրաստվածությանը, որից հետո ամբիոնների վարիչները փորձել են աջակցություն տրամադրել դասախոսներին և իրականացնել խորհրդատվություն:

Դասախոսական կազմի գնահատման նպատակով կիրառվում են նաև ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցաթերթիկներ: Հարցաթերթիկների միջոցով ուսանողները գնահատում են դասախոսների կողմից առարկաների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, ուսանողներին գնահատման գործընթացում ներգրավելը և այլն: Լրացված հարցաթերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները նշում են գնահատականների օբյեկտիվությանն առնչվող խնդիրներ, մեթոդների բազմազանեցման անհրաժեշտությունը, առցանց ռեսուրսների կիրառման պակասը և այլն: Այսուհանդերձ, վերլուծություններն իրականացվել են՝ ընդհանրացնելով բուհի և քոլեջի համար հավաքագրված տվյալները և դրանցից պարզ չի դարձել՝ արդյոք նշված խնդիրները հատուկ են բուհին, թե քոլեջին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատումների արդյունքում բացահայտված խնդիրները արտացոլված չեն գործողությունների հետագա պլանավորման մեջ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Քոլեջը որոշակի քայլեր է իրականացրել դասախոսական կազմի վերապատրաստումների իրականացման ուղղությամբ: Հաստատությունը բյուջեի նախահաշվում առանձնացված ֆինանսական միջոցներ չի նախատեսում քոլեջի դասախոսների մասնագիտական վերապատրաստման համար: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 5 դասախոսներ հանրակրթական և հումանիտար բլոկից քոլեջի ֆինանսական միջոցներով 2023-2024 ուսումնական տարում վերապատրաստվել են: Բժշկական մասնագիտությունների գծով մասնագիտական մոդուլներ դասավանդող դասխոսների մասնագիտական որակավորման բարձրացումը կատարվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից իրականացվող վերապատրաստումների միջոցով (Շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներ, այսուհետ՝ ՇՄԶ):

Դասախոսական կազմը մասնակցում է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող ամենամյա վերապատրաստումներին՝քոլեջի ընդհանուր դասախոսական կազմի առնվազն 5%-ի չափով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացվող գնահատումների արդյունքում առավելագույն միավորներ հավաքած դասավանդողների նկատմամբ «Աշխատողների խրախուսման կարգի» համաձայն քոլեջը նախատեսել է ֆինանսական խրախուսումներ դասախոսական կազմի՝ աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների պատշաճ կատարման, աշխատանքային կարգապահության, ուսանողների գնահատման արդյունքներով բարձր միավորներ հավաքելու դեպքում: Խրախուսման նպատակով տրամադրվում են շնորհակալագրեր, միանվագ դրամական պարգևատրումներ, հուշանվերներ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ խրախուսման հստակ պահանջներ ու չափանիշներ քոլեջը չի սահմանել:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի մեխանիզմներ դեռևս չեն ներդրվել:

Քոլեջը, իր ՌԾ-ում կարևորելով դասախոսական կազմի երիտասարդացումը, քայլեր է ձեռնարկել երիտասարդ կադրերով դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը չունի սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականություն և պլան, բայց փորձառու դասախոսները պատրաստակամ են սկսնակ դասախոսներին փոխանցելու իրենց փորձառությունը:

Դասախոսական կազմի միջին տարիքը 49 է: Դասախոսական կազմի 2024-2025 ուստարվա տարիքային վերլուծությունից պարզվեց, որ 23-35 տարեկան դասախոսական կազմը 20% է, 36-45 տարեկան՝ 14%, 46-55 տարեկան՝ 23%, 56-65 տարեկան՝ 30% և 65-ից բարձր 13%:

Անդրադառնալով քոլեջի դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ քոլեջը ձևավորել է կադրային ռեզերվ, որտեղ ներառվում են մրցույթին դիմած և չհաղթահարած հայտատուները, ռեզերվում են նաև բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև քոլեջում աշխատելու ցանկություն հայտնող ներկայացուցիչներ: Ներկայումս քոլեջի դասախոսական կազմի ռեզերվում բժշկագիտական առարկաների գծով առկա են 9, նոր ներդրված մասնագիտական ուղղություններով՝ 32, հանրակրթական ուղղությամբ՝ 15 ներկայացուցիչներ:

Քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման և ռազմավարական նպատակների իրականացման համար նախատեսել է 41 հաստիք: Նշված հաստիքները զբաղեցնող աշխատակիցներն իրենց աշխատանքային պարտականությունները կատարում են միաժամանակ բուհի և քոլեջի ուղղությամբ: Միայն քոլեջի ուղղությամբ ներգրավված է մեկ մեթոդիստ, հոգեբանի հաստիքը թափուր է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի վարչական աշխատակիցներից 4-ը իրենց վարչական գործառույթներին զուգընթաց ներգրաված են նաև դասավանդման գործընթացում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի կողմից դասախոսական կազմի համալրման և կադրային ներուժի զարգացման ուղղությամբ ռազմավարական նպատակների ձևակերպումը կարևոր նախադրյալ է՝ ուսումնական գործընթացի որակի բարձրացման և մասնագիտական ուղղություններով կայուն մարդկային ռեսուրսների պլանավորմանհամար: Եթե այս նպատակները համալրվեն հստակեցված քաղաքականությամբ, որը կներառի նաև սկսնակ դասախոսների մենթորության ծրագրեր, ապա դա կնպաստի երիտասարդ դասախոսների հաջող ինտեգրմանը և կխթանի կադրային կազմի երկարաժամկետ կայունությունը:

Դասախոսական կազմի ընտրության և համալրման գործընթացը, եթե հստակեցվի մասնագիտական ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան պահանջներով, ապա կապահովի ուսուցման որակի բարձրացումը և յուրաքանչյուր առարկայի դասավանդման համար անհրաժեշտ մասնագիտական համապատասխանությունը: Սա կդարձնի ուսումնական գործընթացն առավել պլանավորված և կբարձրացնի ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Փորձագիտական խումբը դրական է համարում դասավանդման գործընթացում պրակտիկ փորձառություն ունեցող դասախոսների, գործատուների ներգրավումը, ինչը հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը դարձնել առավել գործնական և զարգացնել ուսանողների պրակտիկ կարողությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի գնահատման որոշ մեխանիզմներ, որոնք նպաստել են դասախոսական կազմի շրջանում մեթոդական վերապատրաստումների իրականացման անհրաժեշտության վերհանմանն ու համապատասխան աջակցության տրամադրմանը: Այս համատեքստում հարկ է նշել, որ եթե դասախոսների գնահատման գործընթացը ներառի արդյունքների վերլուծություն և դրանք կապի հետագա գործողությունների պլանավորման հետ, ապա դա կբարձրացնի դասախոսների պատասխանատվությունը և կխթանի նրանց մասնագիտական զարգացմանը: Հետևաբար, ուսանողների կողմից բարձրացված խնդիրները նույնպես կհանգեցնեն կոնկրետ բարելավումների ուսուցման որակի մեջ:

Քոլեջի կողմից դասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման շարունակականության ապահովումը թույլ կտա դասախոսներին մշտապես արդիականացնել իրենց մասնագիտական գիտելիքներն ու դասավանդման մեթոդները: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերապատրաստումների պլանավորված և համակարգված գործընթացի իրականացումը՝ ներառելով նաև ֆինանսական հստակ պլանավորում, կբարձրացնի դասավանդման գործընթացների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև խրախուսման և պարգևատրման քաղաքականության ձևավորումը հստակ չափանիշներով և դրա կապակցումը դասախոսական աշխատանքի արդյունքներին, ինչը կնպաստի դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը, կխթանի դասավանդման արդյունավետության աճը և ուսանողակենտրոն ուսուցման զարգացումը:

Դասախոսական կազմի կայունության ու սահուն սերնդափոխության տեսանկյունից դրական հանգամանք է դասախոսական կազմի ռեզերվի ձևավորումը: Քոլեջի կողմից կադրային ռեզերվի պահպանումը, եթե ուղեկցվի ակտիվ թարմացմամբ և զարգացման հնարավորություններով, ապա այն կապահովի կադրային կայունություն և կդարձնի դասախոսական կազմի համալրումը ավելի կանխատեսելի և ճկուն՝ ուսումնական ծրագրերի ընդլայնման կամ փոփոխման դեպքում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է համապատասխան փորձառություն ու մասնագիտական կարողություններ ունեցող, ինչպես նաև պրակտիկ փորձառություն ունեցող դասախոսներով, քոլեջի դասախոսների կարիքների գնահատման նպատակով կիրառվում են դասալսումներ և հարցումներ, առկա են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ, քոլեջն աջակցում է սկսնակ դասախոսներին ընդգրկվելու դասավանդման գործընթացում, պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսները իրենց մասնագիտական փորձառության շրջանակում մասնակցում են մասնագիտական զարգացման միջոցառումների, ձևավորվել է դասախոսական կազմի ռեզերվ, բուհի դասախոսները ևս համարվում են բազա դասախոսական կազմի համալրման համար, առկա են դասախոսական կազմի խրախուսման դեպքեր, քոլեջն ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ կրթական ծրագրերի իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջի 2023-2026թթ. ՌԾ-ում նպատակ է ամրագրված գիտահետազոտական ներուժի զարգացումն ու ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ավելացումը: Այս նպատակի իրագործման համար հաստատությունը սահմանել է հետևալ խնդիրները՝ զարգացնել քոլեջի գիտահետազոտական ներուժը, ավելացնել հետազոտական բաղադրիչը ՄԿԾ-ներում և զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները:

Միաժամանակ, միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական նպատակի իրագործման համար սահմանվել է խնդիր՝ խթանել Քոլեջի ներգրավվածությունը գիտակրթական և հետազոտական դրամաշնորհային ծրագրերին, իսկ մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ ռազմավարական նպատակի իրագործման համար՝ վերանայել առարկայական ծրագրերը՝ հետազոտական բաղադրիչի շեշտադրմամբ:

Անդրադառնալով սահմանված ռազմավարական խնդիրների իրագործմանը՝ հարկ է նշել, որ քոլեջում դասավանդում են նաև բուհի ՊԴ կազմի ներկայացուցիչները, և քոլեջն իր նպատակները սահմանելիս հիմք է ընդունում նաև նրանց գիտահետազոտական ներուժը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ սահմանված խնդիրների իրագործման համար հստակ պլանավորում, մարդկային և ֆինանսական ռեսուրսների տարանջատում քոլեջը չի իրականացրել, և այս ուղղությամբ ձեռքբերումներ դեռևս առկա չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջը դիտարկում է հետազոտության հետևյալ ուղղությունները՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում առաջին օգնության տրամադրման ժամանակակից մեթոդների ուսումնասիրություն, շրջակա միջավայրի և կայուն կանաչ զարգացման հետազոտություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջինի ուղղությամբ հաստատությունը 2023-2024 ուստարում հանդիպումներ է իրականացրել ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ: Կայուն կանաչ զարգացման հետազոտական ուղղությամբ հաստատությունը նախատեսում է իրականացնել գիտաժողովներ և էկոլոգիական կրթության բաղադրիչների ներդրմանն ուղղված դասընթացներ: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից չի իրականացվել հստակ պլանավորում, և տեսանելի արդյունքներ դեռ չկան:

Փորձագիտական հանդիպումները և այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ հետազոտական բաղադրիչը դրված չէ ուսանողների վերլուծական, ստեղծագործական գործունեության հիմքում: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից որևէ քաղաքականությամբ սահմանված չէ, թե քոլեջն ինչպես է պատկերացնում Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության իրականացումը:

Քոլեջում հետազոտական աշխատանքը չի հանդիսանում մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս, սահմանված չեն նման աշխատանքներ անցկացնելու մեթոդական ցուցումներ, անհատական աշխատանքների ներկայացման կարգ: Կրթական

ծրագրերը չեն պարունակում անհատական գործնական, վերլուծական աշխատանքների/առաջադրանքների հաստատված ցանկ:

Ուսանողներին տրվող ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք գրեթե չեն ներառում հետազոտական տարրեր: Այս աշխատանքներում ուսանողների կողմից հաճախ բացակայում են ինքնուրույն վերլուծությունները և եզրակացությունները, ինչպես նաև աղբյուրների հստակ նշումը: Բացի այդ, ուսանողները հիմնականում օգտվում են ոչ ակադեմիական աղբյուրներից, ինչպես օրինակ wikipedia, ոչ մասնագիտական էլեկտրոնային լրատվամիջոցներ և այլն:

Այսուհանդերձ, մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանակներում գործնական որոշ աշխատանքներ պարունակում են վերլուծական տարրեր. այսպես օրինակ ուսանողներին տրվում են սխալ պատրաստված պրոթեզներ՝ պարզելու ուսանողը կկարողանա գտնել կատարված սխալը, վերլուծել դրա տեղադրման դեպքում բուժառուի առողջության համար հնարավոր ռիսկերը, որոշել սխալների ազդեցությունը, այնուհետև շտկել կատարված սխալները:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում 2021-2023թթ.-ին հրատարակել են 43 աշխատանք՝ տպագրված 9 դասախոսների կողմից: Ընդ որում, դրանցից 22-ը նույն հեղինակի կողմից պատմության ուղղությամբ աշխատանքներ են, իսկ մնացած 21 աշխատանքները հիմնականում գրականության և պատմության ուղղություններով են, առկա չեն աշխատանքներ, որոնք կիրառելի կլինեին «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների հատուկ և ընդհանուր մասնագիտական դասընթացների շրջանակներում: Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսական կազմն ուսումնական նյութերի պատրաստման համար հիմնականում կիրառում է հայերեն կամ ռուսերեն գրականություն, «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների դեպքում առկա չեն նյութերը պատրաստելիս դասավանդման միջազգային փորձի ուսումնասիրմանն ուղղված դեպքեր: Սակայն հարկ է նշել, որ նոր ներդրվող մասնագիտությունների պարագայում, այն դասախոսները, ովքեր նաև բուհում են դասավանդում, ուսումնասիրել են տվյալ մասնագիտության միջազգային փորձը բուհի կրթական ծրագրերի ուղղությամբ:

Հարկ է նշել, որ հաստատությունում առկա են դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նախատեսում են ֆինանսական խրախուսում: Դրանք գործածելի են նաև քոլեջի համար, սակայն այստեղ չեն առանձնացվում քոլեջի ուղղությամբ և քոլեջին վերաբերող հետազոտական աշխատանքները, և նման հստակ քաղաքականություն՝ ուղղված քոլեջի ուսումնական գործընթացին վերաբերող հետազոտական աշխատանքներ իրականացնելու խթանմանը, դեռևս առկա չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը սահմանել է ռազմավարական նպատակներ գիտահետազոտական ներուժի զարգացման և ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ավելացման ուղղություններով, ինչը հնարավորություն կտա պլանավորել ուսանողների վերլուծական և հետազոտական հմտությունների զարգացման գործընթացը՝

Դասավանդողների շարքում բուհի ՊԴ կազմի ներկայացուցիչների ընդգրկվածությունը դիտվում է որպես կարևոր ռեսուրս, և նրանց փորձի նպատակային ներգրավումը քոլեջի հետազոտական գործունեության մեջ կխթանի հետազոտական միջավայրի ձևավորումը, կնպաստի ուսումնական ծրագրերի բարելավմանը և կավելացնի ուսանողների մասնակցությունը հետազոտական գործընթացներին նոր ներդրված կրթական ծրագրերի շրջանակներում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի կողմից ընտրված հետազոտական ուղղությունների համար հստակեցված գործողությունների պլանի և ժամանակացույցի սահմանումն անհրաժեշտություն է, ինչը հնարավորություն կտա նախաձեռնությունները վերածելու կիրառելի արդյունքների, ապահովելու ուսանողների և դասախոսների գործնական ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի և մեթոդական ուղեցույցների ներդրումը կարող է դառնալ կարևոր նախադրյալ ուսանողների վերլուծական մտածողության և հետազոտական հմտությունների ձևավորման համար: Դասընթացներում հետազոտական և վերլուծական առաջադրանքների ներառումը կօգնի ուսանողներին զարգացնել մասնագիտական խնդիրներ լուծելու հմտություններ, ինչի արդյունքում կբարձրանա նրանց պատրաստվածության մակարդակը՝ ապահովելով ձեռքբերված վերջնարդյունքների համապատասխանությունը միջին մասնագիտական կրթության ոլորտում ՈԱՇ-ի պահանջներին:

Դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունների ոլորտային ուղղորդումը քոլեջի մասնագիտություններին և դրանց համադրումը միջազգային փորձին կապահովեն ուսումնական ծրագրերի բովանդակության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին՝ դարձնելով կրթական ծրագրերն ավելի արդիական ու մրցունակ, ինչպես նաև իրականացվող մասնագիտությունների համատեքստում ապահովել կիրառելի հետազոտական աշխատանքներ:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ Քոլեջում գործող հետազոտական խթանման քաղաքականությունն ու ֆինանսական խրախուսման մեխանիզմների նպատակային ձևով ուղղորդումն ուսումնական գործընթացին առնչվող հետազոտությունների խթանմանը՝ հաշվի առնելով քոլեջի առանձնահատկությունները, կնպաստի դասախոսների և ուսանողների ներգրավվածությանը հետազոտական աշխատանքներում և կապահովի կրթական ծրագրերի շարունակական և որակյալ զարգացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը չի հստակեցրել Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին համահունչ հետազոտության իրականացումը, դասախոսական կազմի շրջանում ևս չի հստակեցրել հետազոտական գործընթացներից առկա ակնկալիքները, ուսանողներին տրվող առաջադրանքների մեծ մասը չեն պարունակում հետազոտական բաղադրիչ և չեն նպաստում ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը, իրականացվող հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներ քոլեջում չեն գործում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2023-2026թթ. ՌԾ նպատակներից է ուսումնագիտական գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը և ենթակառուցվածքների արդիականացումը: Դրան համապատասխան 4 խնդիրներ են առանձնացված՝ Քոլեջի կառավարման մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովման նպատակով ներդրված EMIS համակարգի գործարկման գործընթացների ամբողջականացում, Քոլեջի գիտակրթական գործունեությունն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգերի կատարելագործում, ուսումնագիտական գործընթացների իրականացման համար Քոլեջի ենթակառուցվածքների արդիականացման գործընթացների շարունակականություն, Քոլեջի ուսումնագիտական գրականության արդիականացման և համալրման գործընթացների շարունակականություն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նշված խնդիրների ուղղությամբ հստակ ցուցիչներ սահմանված չեն, սակայն քոլեջը աշխատանքներ է իրականացնում ռեսուրսների թարմացման և համալրման ուղղությամբ:

Քոլեջը գործունեություն է ծավալում Երևանում և Ալավերդիում՝ ընդ որում համալսարանի հետ համատեղ վարձակալված նույն տարածքում, ընդհանուր տարածքը կազմում է 3511 ք/մ:

Քոլեջն ունի բժշկագիտության լաբորատորիա, ատամնատեխնիկական լաբորատորիա, քիմիայի, կենսաբանության և անատոմիայի լսարան, մարզասրահ, աշխատասենյակներ, գրադարան, ընթերցասրահ: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը չունի ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, ինչպես նաև կրթական ծրագրերով նախատեսված որոշ լաբորատորիաներ:

Քոլեջի և բուհի համար համատեղ օգտագործման հնարավորությամբ գործում է 1 լինգաֆոնային լսարան, դասընթացների անցկացման 14 լսարան, ուսումնական 3 համակարգչային լսարան (ընդհանուր թվով 34 համակարգիչ և 2 դյուրակիր համակարգիչ): Առկա են 2 անշարժ և 2 շարժական պրոյեկտորներ: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ: Քոլեջի համակարգիչները թարմացվում, լսարանները վերանորոգվում են նաև բուհի մասնակցությամբ միջազգային ծրագրերի միջոցով:

Քոլեջի գրադարանային ֆոնդում առկա է շուրջ 430 միավոր մասնագիտական գրականություն, որը նոր ներդրված մասնագիտությունների ուղղությամբ ներառում է նաև բուհի համապատասխան կրթական ծրագրերի համար նախատեսված գրականութունը: Գրականությունը հայերեն է: Քոլեջի ուսանողներն օգտվում են Համալսարանի գրադարան-ընթերցասրահից, առկա է որոշ էլեկտրոնային նյութերով ներբեռնված 2 համակարգիչ: Հարկ է նշել, որ քոլեջի գրադարանն անդամակցում է Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիային, Ազգային գրադարանի հետ ունի միջգրադարանային համագործակցություն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում՝ օգտվելու միջազգային բաց աղբյուրներից: Առկա են դիդակտիկ մեծ և փոքր չափսերի պաստառներ, որոնք դասախոսների ուսումնական

նյութերի մաս են կազմում: Փորձագիտական այցից պարզվեց, որ գրականության և պաստառների համալրումներն իրականացվում են՝ ըստ ներկայացված պահանջագրերի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Մասնավորապես, հաշվի առնելով, որ մասնագիտական թվայնացված ծրագրեր առկա չեն՝ ուսանողները որոշ ծրագրեր (ինչպես օրինակ՝ Cad/Cam) տեսնելու հնարավորություն են ստանում պրակտիկաների վայրերում (Կարեն դենտ, Բոյաջյան դենտ և այլն), մասնակից են դառնում շտապօգնության կանչերի, մասնակցություն ունենում ներարկման, վիրակապման և այլ գործընթացների, կերամիկայի թրծում վառարանում և այլն: Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցները գործատուների ռեսուրսներից առավել ազատորեն օգտվելու անհրաժեշտություն են տեսնում (մասնավորաբար՝ ծրագրերը կիրառելու նպատակով նաև պրակտիկաների շրջանակից դուրս): Միաժամանակ, քոլեջը քայլեր է ձեռնարկում՝ ընդլայնելու գործատուների հետ համագործակցության շրջանակները:

Համալսարանն ունի Ֆինանսական նախահաշվարկի կազմման և բաշխման ընթացակարգ, որի հիման վրա իրականացնում է ֆինանսական բաշխում հաստատության համար: Ֆինանսական պլանավորումն ու հաշվետվությունն իրականացվում է ամբողջ հաստատության համար: Հարկ է նշել, որ քոլեջը չի իրականացնում առանձին ֆինանսական պլանավորում և չի առանձնացնում տվյալներ եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Փորձագիտական այցի շրջանակում ուսումնասիրված 2021-2022, 2022-2023, 2023-2024 ուստանիների վերաբերյալ տրամադրված տվյալների համաձայն՝ ֆինանսական մուտքերը ձևավորվում են ուսման վարձավճարներից և համապատասխանաբար եղել են՝ շուրջ 95-97%, որոշ փոքր մուտքեր եղել են նաև դիպլոմների վճարներից, քննությունների մասնակցության և այլ գումարներից: 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի պարագայում ուսման վարձավճարներով պայմանավորված մուտքերն արդեն կազմում են նախորդ ուստարվա մուտքերի շուրջ 75%-ը: Ֆինանսական ելքերին անդրադառնալով՝ հարկ է նշել, որ մուտքերի շուրջ 40-50%-ը տրամադրվում է դասախոսական կազմի աշխատավարձի վճարման համար, իսկ շուրջ 4-5%-ը՝ պրակտիկաների կազմակերպման համար: Քոլեջը ծախսեր է իրականացնում նաև գրականության ձեռքբերման, լսարանների նորոգման, լաբորատոր սարքերի և նյութերի ձեռքբերման և այլ նպատակներով, որոնց վերաբերյալ առանձնացված տվյալներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել: Վերջին տարիներին վարձավճարն աճել է շուրջ 36%-ով:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, հաստատության ներսում՝ ներքին ցանցի միջոցով, որը հնարավորություն է տալիս տարբեր ստորաբաժանումների անուններով թղթապանակներում փաստաթղթեր պահել՝ ներքին շահակիցների համար հասանելիություն ապահովելու համար: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական այլ համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները, ընդհանուր

առմամբ, գոհ են բուժկետի ծառայություններից: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսները ծանոթացնում են ուսանողներին անվտանգության կանոններին: Եղել են որոշ առանձին դեպքեր, երբ ուսանողը փոքր վնասվածքներ է ունեցել, ինչի հետ կապված ստացել է համապատասխան բուժօգնություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանող: Բացակայում են թեքահարթակները: Քոլեջն ունի ապաստարան:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ ուսանողների շրջանում կարիքների վերհանման նպատակով կիրառվող հարցաթերթիկներում անդրադարձ է կատարված լաբորատոր և գրադարանային ռեսուրսներին: 2023-2024 ուստարվա հարցումների վերլուծությունները ներկայացված են համընդհանուր՝ բուհի և քոլեջի ուսանողների շրջանում իրականացված հարցումների հիման վրա: Քոլեջի մասով առանձին վերլուծություն չի իրականացվում: Դասախոսների կարիքների բացահայտմանն ուղղված հարցաթերթիկով անդրադարձ է կատարված հարցին, թե արդյոք առկա գույքային և նյութատեխնիկական բազան բավարար է աշխատանքային գործընթացի կազմակերպման համար: Հարցմանը մասնակցել է 11 դասախոս, նրանց 72%-ը համարել է, որ բավարար է: Հարցաթերթիկը նաև բաց հարց է պարունակում՝ մեկնաբանելու դժգոհության հանգամանքը, այս պարագայում անդրադարձ են կատարել մուլյաժների, տեսանյութեր ցուցադրելու սարքերի, համակարգիչների անհրաժեշտություններին: Փորձագիտական այցից պարզվեց, որ ռեսուրսների գնահատման արդյունքում 3 լսարաններում օդորակիչներ են տեղադրել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսները ռեսուրսների վերաբերյալ իրենց կարիքները ներկայացնում են պահանջագրերով, քննարկում են նաև մանկավարժական խորհրդում, կառավարման խորհրդում: Լաբորատոր նյութերի և գրականության ուղղությամբ կարիքները հիմնականում բավարարվում են, իսկ առավել մեծ ծախսեր պահանջող սարքերի ձեռքբերման պարագայում դիտարկում են դրա խիստ անհրաժեշտության հանգամանքը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցները տեսնում են անհրաժեշտություն որոշ լաբորատոր սարքերի համալրման (մասնավորաբար՝ մանրադիտակ, պաստառներ և այլն):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջն իր ռազմավարությամբ կարևորել է անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումն ու ենթակառուցվածքների արդիականացումը: Քոլեջը շարունակաբար իրականացնում է ռեսուրսների թարմացման և համալրման գործընթացներ, ինչի շրջանակում վերջին տարիներին կատարվել են լսարանային վերանորոգումներ, որոշակի տեխնիկական միջոցների թարմացումներ, ինչպես նաև համակարգիչների համալրում: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ սահմանված ռազմավարական խնդիրների իրագործման համար հստակ ցուցիչների ներդրումը հնարավորություն կտա ռեսուրսների թարմացման և զարգացման ուղղությամբ քայլերը դարձնել ավելի համակարգված և գնահատելի՝ նպաստելով նաև մշտադիտարկման և բարելավման շարունակական գործընթացի ապահովմանը:

Քոլեջի կողմից բուհի հետ համատեղ ռեսուրսների օգտագործումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել ծախսերը և ընդլայնել ուսանողների հասանելիությունը տարբեր ռեսուրսների նկատմամբ: Միջազգային ծրագրերից ներգրավվող ռեսուրսների և տեխնիկական բազայի հզորացման արդյունքում կբարձրանա կրթական ծրագրերի որակը և

կստեղծվեն հնարավորություններ ուսանողների գործնական կարողությունների զարգացման համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում գործատուների ռեսուրսների համատեղ կիրառումը, ինչը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու նորագույն թվային տեխնոլոգիաներին և աշխատաշուկայի իրական պայմաններին։ Այս համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ գործատուների ռեսուրսների ավելի լայն հասանելիության ապահովումը ուսանողների համար հնարավորություն կտա գործնական հմտությունների ձևավորման գործընթացը դարձնել առավել արդյունավետ և ուսումնական փորձառությունը՝ ավելի ամբողջական։

Գրադարանային ռեսուրսների համալրումն արդիական և օտարալեզու գրականությամբ հնարավորություն կտա ուսանողներին օգտվելու ավելի լայն և արդի տեղեկատվական բազայից, ինչը կբարձրացնի ուսման արդյունավետությունը և կխթանի ուսանողների մասնագիտական գիտելիքների ընդլայնումը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է համակարգել այս գործընթացը, ինչը հնարավորություն կտա կրթական ծրագրերի բովանդակությունը համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին։

Անդրադառնալով ֆինանսական պլանավորմանն ու ռեսուրսների բաշխմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ եթե Քոլեջը իրականացնի առանձին ֆինանսական պլանավորում և հստակ հաշվառում ապահովի սեփական ֆինանսական հոսքերի համար, ապա դա թույլ կտա ավելի արդյունավետ կառավարել ռեսուրսները, վերլուծել եկամուտների և ծախսերի ուղղությունները և նպատակային ուղղել միջոցները՝ ուսումնական միջավայրի և ենթակառուցվածքների բարելավման համար։ Միաժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջն անհրաժեշտություն ունի բազմազանեցնելու ֆինանսավորման աղբյուրները՝ ներգրավելով դրամաշնորհային ծրագրեր և այլընտրանքային ֆինանսավորման միջոցներ, ինչը թույլ կտա նվազեցնել կախվածությունն ուսման վարձավճարներից, նվազեցնելու ֆինանսական կայունության ռիսկերը (նաև պայմանավորված տարածքի վարձակալման հարցով), իսկ ֆինանսական կայունության աճը կապահովի զարգացման ծրագրերի ավելի կանխատեսելի և վստահելի իրականացումը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի անվտանգության համակարգի առկայությունը, ինչը կարևոր նախադրյալ է ուսումնական գործընթացի համար անվտանգ միջավայր ապահովելու տեսանկյունից։

Քոլեջում ուսանողների և դասախոսների կարիքների ուսումնասիրության մեխանիզմների առկայությունը դրական նախադրյալ է՝ ռեսուրսների բարելավման համար հիմնավորված որոշումներ կայացնելու տեսանկյունից։ Անհրաժեշտ է քոլեջի կարիքների վերլուծությունն իրականացնել առանձին՝ բաժանելով այն բուհի համընդհանուր վերլուծությունից, ինչը թույլ կտա առավել նպատակային լուծումներ տալ քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերի կարիքներին համապատասխան և ապահովել ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջն իր բժշկական կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է նվազագույն ռեսուրսներով, նոր ներդրված կրթական ծրագրերի համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում ենթակառուցվածքների բարելավման և ուսումնական նյութերի համալրման ուղղությամբ, պրակտիկաների շրջանակներում կիրառվում են գործատուների ռեսուրսներն

ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացման նպատակով, հաստատությունն ապահովում է անվտանգ միջավայր ներքին շահակիցների համար, դասախոսներն ուսանողներին ծանոթացնում են անվտանգ կենսագործունեության պահանջներին, գործում են ռեսուրսներից բավարարվածության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հաստատության ստորաբաժանումների հաշվետվությունները հավաքագրվում են Որակի ապահովման վարչության կողմից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումները հաշվետու չեն քոլեջի տնօրենին: Տնօրենի հաշվետվություններում հիմնականում անդրադարձ է կատարվում ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ անդրադառնալով դասախոսների ծանրաբեռնվածության բաշխմանը, դասացուցակների կազմմանը, դասամատյանների նախապատրաստմանը և այլն: Քոլեջի գործունեության, կրթական ծրագրերի, ուսանողների թվաքանակի մասին որոշ տվյալներ ամփոփվում են նաև ռեկտորի հաշվետվության մեջ, որը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդին, մասնակիցների ժողովին ու հրապարակվում համալսարանի կայքէջում: Հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք կրում են հիմնականում նկարագրական բնույթ, չեն կապակցվում ռազմավարական պլանավորմանը և չեն ներառում հստակ ցուցիչներ և իրականացված գործընթացների ազդեցություն:

Հաստատությունն ապահովում է ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը հանրությանը՝ օգտագործելով Ֆեյսբուքյան հարթակը և համալսարանի պաշտոնական կայքէջը: Համալսարանում գործում է Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնը, որը համակարգում է հաստատության գործունեության լուսաբանումը, հաղորդակցությունը հանրության, լրատվամիջոցների հետ:

Համալսարանի պաշտոնական կայքէջում առկա է առանձին բաժին, որտեղ ներկայացված է քոլեջի ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը, համապատասխան կարգերը և ընթացակարգերը: Հարկ է նշել, որ կայքում կրթական ծրագրերի բովանդակությանն առնչվող տեղեկատվությունն ամբողջական չէ. կրթական ծրագրերի վերջնարդյունքները, մոդուլային նկարագրերը հասանելի չեն: Ընթացակարգերի թափանցիկության ապահովման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում նաև Հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կառավարման բաժնի հետ համագործակցությամբ, որը պատասխանատու է կայքի տեխնիկական ապահովման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է քոլեջի տեղեկատվությունը կայքում առանձնացնել՝ դարձնելով այն ավելի համակարգված և հասանելի:

Ֆեյսբուքյան հարթակում իրականացվում են հրապարակումներ՝ նպատակ ունենալով բարձրացնել դիմորդների շրջանում տեղեկացվածությունը: Կենտրոնն իրականացնում է էջերի և գովազդների մոնիթորինգ, ապահովում է հետադարձ կապ, որի արդյունքում պարզվել է, որ 2024-2025 ուստարում 54% դիմորդները ստացել են տեղեկատվություն սոցիալական ցանցերի միջոցով, հիմնականում՝ գովազդներից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հատուկ ուշադրություն է դարձվում նաև առանձին ստորաբաժանումների տեղեկատվական ակտիվությանը: Որոշ դեպքերում ստորաբաժանումներն ունեն իրենց առանձին էջերը: Մասնավորապես, քոլեջը նախկինում ունեցել է առանձին Ֆեյսբուքյան էջ, որը որոշ ժամանակ անց դադարել է ակտիվ գործել: Ներկայումս քոլեջի և համալսարանի հրապարակումներն իրականացվում են միասին մեկ հարթակում: Ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հրապարակումներ են իրականացվում մշակութային միջոցառումների, սեմինարների, ուսանողական հանդիպումների, ուսանողների և շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Կենտրոնը նախատեսում է նկարահանել մասնագիտական փոքր տեսանյութեր ուսանողների ներգրավմամբ՝ քոլեջում գործող մասնագիտությունների վերաբերյալ հանրային իրազեկման և դիմորդների ներգրավման նպատակով:

Հետադարձ կապի ապահովման նպատակով կիրառվում են հիմնականում սոցիալական հարթակները, որտեղ դիմորդները հաճախ տեղեկատվություն են փորձում գտնել ընդունելության, քոլեջն ավարտելուց հետո համալսարանում կրթությունը շարունակելու հնարավորությունների վերաբերյալ:

Անդրադառնալով հասարակությանն արժեքների ու գիտելիքների փոխանցմանն ուղղված միջոցառումներին՝ հարկ է նշել, որ հաստատությունը դպրոցների աշակերտների համար բաց դռների օրերի շրջանակներում մասնագիտությունների ներկայացմանը զուգահեռ աշակերտենրին տրամադրում է տեղեկատվություն նաև առաջին բուժօգնության տրամադրման վերաբերյալ: Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի, ՀՀ ՊՆ ռազմական համալսարանների, «Ապագա զինվոր» ռազմահայրենասիրական դպրոցի ղեկավարության հետ ձեռք են բերվել մասնագիտական փորձի փոխանակման պայմանավորվածություններ, որոնց համաձայն՝ Քոլեջի ուսանողներն առաջին բուժօգնության իրենց հմտությունները պետք է փոխանցեն համագործակցող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

Հյուսիսային համալսարանում գործող իրավաբանական կլինիկան մատուցում է անվճար իրավաբանական խորհրդատվություն հասարակությանը, խորհրդատվության տրամադրման շրջանակներում որպես դիտորդներ ներգրավվում են նաև քոլեջի ուսանողները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված միջոցառումները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության, հստակ պարբերականություն գործընթացների կազմակերպման համար նախատեսված չէ: Հաստատությունում իրականացվող կրթական ծրագրերի ուղղությամբ կարճաժամկետ ծրագրեր քոլեջում չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ապահովում է հանրության հետ հաղորդակցությունն ու թափանցիկությունը՝ օգտագործելով սոցիալական հարթակներն ու համալսարանի պաշտոնական կայքէջը: Նկատվում են նաև

դրական միտումներ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ, ինչպիսիք են բաց դռների օրերն ու գործընկեր հաստատությունների հետ համագործակցության շրջանակում իրականացվող նախաձեռնությունները: Հետադարձ կապի ապահովման և հանրության հետ հաղորդակցման գործիքների կիրառումը նպաստում է շահակիցների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

Միաժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ եթե Քոլեջը ձևավորի ավելի համակարգված հաշվետվողականության համակարգ՝ ներառելով հստակ չափորոշիչներ և գնահատման ցուցանիշներ, ապա այն հնարավորություն կընձեռի ոչ միայն ներքին կառավարման արդյունավետության բարձրացման, այլև հասարակության և շահակիցների վստահության ամրապնդման: Սա թույլ կտա նաև կապակցել հաշվետվությունները ռազմավարական պլանավորման հետ և առավել հստակ գնահատել իրականացված միջոցառումների արդյունքները:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջն անհրաժեշտություն ունի համալրելու և պարբերաբար թարմացնելու պաշտոնական կայքէջում առկա տեղեկատվությունը քոլեջի գործունեության, կրթական ծրագրերի բովադակության ուղղությամբ, ինչը թույլ կտա շահակիցներին, ապագա դիմորդներին ստանալ ամբողջական պատկեր կրթական հնարավորությունների մասին, ինչը կնպաստի քոլեջի տեսանելիության բարձրացմանը և դիմորդների ներգրավմանը:

Քոլեջի համար հստակ PR ռազմավարության մշակումը, հաղորդակցության ձևերի տարանջատումը կնպաստեն սոցիալական հարթակների առավել արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով հանրության հետ ավելի արդյունավետ հաղորդակցություն և նպաստելով քոլեջի հանրային իմիջի ձևավորմանը և շահակիցների ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացում: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ եթե հետադարձ կապի համակարգը դառնա ավելի համակարգված՝ ներառելով ոչ միայն դիմորդների, այլև ուսանողների, շրջանավարտների և այլ շահակիցների կարիքների գնահատումը, ապա հնարավոր կլինի ավելի նպատակային բարելավել կրթական ծառայությունները, ուսումնական միջավայրը :

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև քոլեջի ներուժի առկայությունը հանրությանն արժեքների ու գիտելիքների փոխանցման տեսանկյունից: Այս գործընթացների պարբերական իրականացումը, ներառյալ մասնագիտական ուղղվածությամբ տեսանյութերի ստեղծումը և բաց դռների օրերի ակտիվացումը, կապահովեն ուսանողների, արտաքին շահակիցների ավելի խորը ներգրավվածություն և կուժեղացնեն քոլեջի սոցիալական պատասխանատվության դրսևորումը:

Համագործակցությունը գործընկեր հաստատությունների հետ, եթե իրականացվի ծրագրային և շարունակական ձևաչափով, օրինակ՝ առաջին օգնության կամ իրավաբանական խորհրդատվության պարբերական ծրագրերով, կխթանի քոլեջի սոցիալական ազդեցությունը: Հաստատության դասախոսական կազմի ներուժի կիրառմամբ կարճաժամկետ դասընթացների ներդրումը ևս դրական ազդեցություն կարող է ունենալ քոլեջի մասին իրազեկվածության բարձրացման, նաև ֆինանսական այլընտրանքային մուտքերի ապահովման տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա են արտաքին հաշվետվողականության որոշ մեխանիզմներ, գործում է հաստատության կայքէջը, որտեղ հասանելի են հաստատության փաստաթղթերը, ֆեյսբուքյան էջում լուսաբանվում են քոլեջի

ընթացիկ միջոցառումները, հաստատությունը քայլեր է ձեռնարկում արտաքին շահակիցների շրջանում գիտելիքների փոխանցման միջոցառումների իրականացման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջն իր Ռազմավարական ծրագրով կարևորել է արտաքին կապերի հաստատումը՝ նախատեսելով զարգացնել և ընդլայնել արտաքին կապերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին և նպաստելով Քոլեջի գործընթացների միջազգայնացմանը: Այս նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝ մշակել և ներդնել Քոլեջի միջազգայնացման նոր հայեցակարգ և քաղաքականության ծրագիր, ընդլայնել Քոլեջի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ, խթանել Քոլեջի ներգրավվածությունը գիտակրթական և հետազոտական դրամաշնորհային ծրագրերին:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նշված խնդիրներից 2-րդի ուղղությամբ է քոլեջը քայլեր ձեռնարկել՝ Էրազմուս+ ծրագրի մասնակցության ծրագիր ներկայացնելով: Արդյունքները դեռևս չեն ամփոփվել:

Հաստատության արտաքին կապերի, համագործակցությունների հաստատման աշխատանքներում ներգրավված են Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտորը, Արտաքին կապերի բաժինը (այսուհետ՝ ԱԿԲ), ինչպես նաև Շրջանավարտների և պրակտիկայի կենտրոնը, որը զբաղվում է տեղական կապերի, գործատուների հետ համագործակցությունների հաստատմամբ և պրակտիկայի կազմակերպմամբ:

ԱԿԲ կանոնադրությամբ շեշտադրվում է բաժնի կողմից իրականացվող աշխատանքներում Քոլեջը ներառելու հանգամանքը: Քոլեջի միջազգայնացումը խթանելու համար ԱԿԲ-ը խնդիրներ է առաջադրել ապահովելու Քոլեջի համագործակցությունն այլ ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ օտարերկրյա քոլեջների հետ և կազմակերպելու օտարերկրյա քաղաքացիների ներգրավումը Քոլեջի ծրագրերում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում իրականացնել մարքեթինգ՝ բժշկական կրթության բնագավառում՝ ընդգրկելով օտարերկրյա ներկայացուցիչների: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում դիմորդների ներգրավման համար ԱԿԲ-ն ձևավորել է համագործակցային կապեր Հնդկաստանի, Գանայի և Նիգերիայի հետ. նշված վերջին երկու երկրներից քոլեջն ունի 4 ուսանող՝ ընդունված 2022-2023 ուստարում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտարերկրյա դիմորդների ներգրավման ու ընդունելության խթանման միջոցառումներ ներկայումս պլանավորված չեն, սակայն

դիմորդների առկայության դեպքում հաստատությունը պատրաստակամ է ընդունելություն իրականացնելու։

ԱԿԲ պլանների և հաշվետվությունների դիտարկումից պարզ դարձավ, որ նոր կապերի հաստատումը և համագործակցությունները տարանջատված չեն համալսարանի և քոլեջի համար, միայն քոլեջին վերաբերող առանձին ուղղություններ նախատեսված չեն։

2022թ. քոլեջը կնքել է համագործակցության պայմանագիր Ֆինլանդիայի Հարավային Սավոյի ESEDU քոլեջի հետ, որով նախատեսվում է Քոլեջի «Քույրական գործ» մասնագիտական ծրագիրն իրականացնել կրկնակի դիպլոմի տրամադրմամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն առայժմ չի գործարկվել ուսանողների համար առկա վարձավճարների հատկացման խնդիրների պատճառով։

Քոլեջը տարբեր կառույցների հետ համագործակցությամբ 2020-2024թթ. իրականացրել է նաև նոր ներդրված ծրագրերի վերաբերյալ հնարավոր գործատուների կարծիքների և շուկայի ուսումնասիրություններ։ Գործատուների հետ քննարկումների արդյունքում սակայն, ինչպես ցույց տվեցին փորձագիտական ուսումնասիրությունները և այցը, դրանց արդյունքները դեռևս չեն ներդրվել Քոլեջի գործունեության մեջ։

Անդրադառնալով փորձի փոխանակմանը և դասախոսական կազմի շարժունության իրականացմանը՝ հարկ է նշել, որ քոլեջի դասախոսական կազմի համար շարժունության առանձին ծրագրեր առկա չեն։ Այսուհանդերձ, Քոլեջն օգտվում է այս ուղղությամբ Հյուսիսային համալսարանի հնարավորություններից և ձևավորած կապերից։ Փորձի փոխանակման ծրագրերում ընդգրկվում են նաև այն դասախոսները, ովքեր դասավանդում են Քոլեջում։ Այսպես օրինակ, դասախոսները մասնակցել են դասավանդման մեթոդաբանության և ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումների ներդրմանը նվիրված վերապատրաստումներին։

Քոլեջն ունի 16 գործատու-գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության հիման վրա կազմակերպվում են ուսանողների պրակտիկաները։ Քոլեջի ամենախոշոր գործատու-գործընկերներից են «Կարեն դենտալ» ատամնատեխնիկական լաբորատորիան, «Բոյադջյան դենտալ» ատամնատեխնիկական լաբորատորիան, «Զիքրոն դենտ» ընկերությունը, Երևանի քաղաքապետարանի «Շտապօգնություն» ՓԲԸ-ն, «Թիվ 2 բուժմիավորում»-ը, «Մարգարյան ծննդատուն» մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնը և այլն։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների շրջանակը վերջին տարիներին ընդլայնվել է։ Քոլեջը համագործակցության պայմանագրեր է կնքել նաև նոր ներդրված ծրագրերի ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար, մասնավորապես՝ «Ատովմյան» իրավաբանական և խորհրդատվական ՍՊԸ-ի, «Նեվը Գիվափ» իրավաբանական ընկերության, «Թամարա Սեյրանի Բաղդասարյան» փաստաբանական գրասենյակի և «Սմեշ ստուդիո» մանկական զարգացման կենտրոնի հետ։ Հաշվի առնելով, որ նոր ներդրված կրթական ծրագրերի ուղղությամբ բարձրագույն կրթություն հաստատությունը ևս իրականացնում է՝ այս կրթական ծրագրերի ուղղությամբ համագործակցային կապերը հաճախ արդեն իսկ ձևավորված են եղել և կիրառվում են նաև քոլեջի համար։

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության բավարար մակարդակի ապահովմանը՝ հարկ է նշել, որ քոլեջում քայլեր են ձեռնարկվել դասախոսական և վարչական անձնակազմի շրջանում օտար լեզվի իմացությունը բարձրացնելու ուղղությամբ։ Հայաստանում Բրիտանական խորհրդի հետ կնքված համագործակցության

հուշագրով Քոլեջի անգլերենի երկու դասախոս մասնակցել են անգլերենի վերապատրաստման դասընթացի, վարչակազմի որոշ աշխատակիցներ բարելավել են անգլերենի իրենց իմացության մակարդակը և ընդգրկվել են «Էրազմուս+» ծրագրերում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանի շենքում գործող «Լեզուների տան» հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Քոլեջի դասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ մասնակցել են անգլերենի դասընթացների՝ հնարավորություն ունենալով վճարել առկա սահմանաչափից պակաս: Նույն հնարավորությունն ընձեռնվել է նաև Քոլեջի ուսանողներին, սակայն, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, ուսանողներն այս հնարավորությունից հազվադեպ են օգտվում:

Համաձայն ինքնավերլուծության՝ դասավանդողների 27%-ը, վարչական աշխատակիցների 24%-ը և ուսանողների 98%-ը տիրապետում են օտար լեզուների՝ ռուսերենի կամ անգլերենի: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ լեզվաիմացության մակարդակի գնահատում քոլեջը չի իրականացրել և ըստ մակարդակների օտար լեզվի իմացության բարձրացմանն ուղղված հստակ պլանավորում առկա չէ: Օտարերկրյա ուսանողների պարագայում ևս ընդունելությունն իրականացնելիս լեզվի իմացության մակարդակի գնահատում չի իրականացվում: Դասալսումներից պարզ դարձավ, որ նույն կուրսերում սովորող ուսանողները լեզվաիմացության տարբեր մակարդակ ունեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն իր ռազմավարությամբ կարևորել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը՝ շեշտադրելով միջազգային ճանաչելիության մեծացումը և գործընկեր ցանցերի ընդլայնումը:

Քոլեջի նախաձեռնողականությունը «Էրազմուս+» ծրագրի մասնակցության հայտ ներկայացնելու, ինչպես նաև այլ քոլեջների հետ համագործակցային կապեր հաստատելու ուղղությամբ կարևոր հիմքեր են մասնագիտական ոլորտում փորձի ուսումնասիրման ու Քոլեջի զարգացման համար: Այս ծրագրերի լիարժեք գործարկումը կնպաստի ուսանողների և դասախոսների շրջանում փորձի փոխանակմանը և միջազգային լավ փորձի տեղայնացմանը:

Քոլեջի ջանքերը՝ համագործակցային կապեր ստեղծելու Հնդկաստանի, Գանայի և Նիգերիայի հետ և օտարերկրյա ուսանողների ներգրավումը, արդեն հիմք են ստեղծում միջազգային ուսանողական համայնքի ձևավորման համար: Դիմորդների ներգրավմանն ուղղված պլանավորված միջոցառումների մշակումը և համակարգված իրագործումը կխթանեն օտարերկրյա ուսանողների հոսքի կայունացումը և Քոլեջի միջազգային ճանաչելիության բարձրացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին կապերի բաժնի կողմից իրականացվող աշխատանքների առանձնացումը քոլեջի համար կարևորություն ունեցող ուղղություններով, ակնկալվող արդյունքների հստակ սահմանումը կնպաստեն արտաքին կապերի ու միջազգայանցման ուղղությամբ առավել չափելի արդյունքների ձեռքբերմանը, միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ նոր համագործակցությունների հաստատմանը ու զարգացմանը: Այս ամենն առավել թիրախային կդարձնեն համագործակցություններն ու գործընթացները՝ բացառելով այնպիսի համագործակցությունները, որոնք կիրառելիություն չեն գտնի:

Գործատու գործընկերների ցանցի ընդլայնումը և նոր ծրագրերի համար պրակտիկայի հնարավորությունների ստեղծումը ձևավորում է ամուր հիմք ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացման և աշխատաշուկայի պահանջներին

համապատասխանող մասնագետների պատրաստման համար: Աշխատաշուկայի ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը և կրթական ծրագրերում դրանց կիրառումը կօգնի ծրագրերն առավել ճշգրիտ համապատասխանեցնել գործատուների ակնկալիքներին՝ ավելացնելով շրջանավարտների մրցունակությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանի ներքին ռեսուրսները և փորձի փոխանակման առանձին ծրագրերը Քոլեջի դասախոսների ներգրավմամբ որոշակիորեն ապահովում են դասավանդման մեթոդաբանության արդիականացում: Այս տեսանկյունից Քոլեջի դասախոսական կազմի փորձի փոխանակման հատուկ ծրագրերի մշակումն ու գործարկումը կբարձրացնեն մասնագիտական զարգացման հնարավորությունները, կխթանեն միջազգային փորձի ներմուծումը և կբարձրացնեն ուսուցման արդյունավետությունը:

Օտար լեզվի ուսուցման առկա հնարավորությունների առավել ակտիվ կիրառումը, լեզվաիմացության մակարդակի գնահատման և զարգացման նպատակային պլանի ներդրումը կնպաստեն Քոլեջի ներսում միջազգային կապերի ընդլայնմանը, դասախոսների և ուսանողների լեզվաիմացության մակարդակի բարձրացմանը՝ նոր հնարավորություններ ստեղծելով փորձի փոխանակման ու լավագույն փորձի տեղայնացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը շեշտադրում է միջազգայնացման գործընթացների զարգացումն իր ռազմավարական ծրագրով, ունի կրթական ծրագրերի ուղղություններով համապատասխան գործատուներ, կիրառում է նաև նրանց ռեսուրսները ուսանողների պրակտիկաների կազմակերպման և ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացման նպատակով, շարունակաբար ընդլայնում է գործատուների շրջանակը, քայլեր է իրականացրել Erasmus+ ծրագրերի դիմելու ուղղությամբ, հաստատությունը բուհական ծրագրերի շրջանակներում կարողանում է իրականացնել դասախոսական կազմի կարողությունների զարգացման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Հաստատությունում որակի ապահովման գործընթացներն իրականացվում են Որակի ապահովման վարչության կողմից, որը համատեղ գործում է բուհի և Քոլեջի համար: Վարչությունը ձևավորվել է 2010 թվականին, գտնվում է անմիջականորեն ռեկտորի ենթակայության ներքո և զեկույցներով հանդես է գալիս Գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերի ժամանակ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման վարչությունը քոլեջի ուղղությամբ աշխատանքները մեկնարկել է քոլեջի հավատարմագրման գործընթացին ընդառաջ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար ՈԱ վարչությունն առաջնորդվում է ՈԱ ձեռնարկով և Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության կանոնադրությամբ: Որակի ապահովման վարչության նպատակն է նպաստել Հյուսիսային համալսարանի առաքելության և ռազմավարական ծրագրի իրագործմանը, բուհի կառավարման արդյունավետության բարձրացմանը, համալսարանում որակի ապահովման մշակույթի ձևավորման, որակի ամբողջական կառավարման համակարգի ներդրման միջոցով նպաստել Համալսարանի կրթության որակի բարելավմանը և Համալսարանի մրցունակության բարձրացմանը: Քոլեջի կրթական կարիքների վերհանման ու զարգացման ուղղություններին առնչվող նպատակներ առանձնացված չեն:

Որակի ապահովման տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են ուսանողների բավարարվածության գնահատման, գործատուների արձագանքների հավաքագրման վրա: ՈՆԱ վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքներում չեն տարանջատվում բուհի և քոլեջի խնդիրները, և արդյունքները ներկայացվում են ընդհանրացված տեսքով:

Փորձագիտական ուսումնասիրություններից և այցից պարզ դարձավ, որ հաստատությունը չի սահմանել քոլեջի մասով կառավարչական որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ուղղությունները, որակի ապահովման ներքին համակարգից առկա ակնկալիքները, բացի այդ, չեն հավաքագրվում քոլեջի գործունեության բոլոր ուղղություններն ընդգրկող տվյալներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհի և քոլեջի ՈՆԱ աշխատանքների իրականացման համար վարչությանը հատկացված է 5 հաստիք՝ ՈԱ վարչության պետ, վարչության գլխավոր մասնագետ, առաջատար մասնագետ և երկու կրտսեր մասնագետ: Փորձագիտական այցից և պաշտոնների անձնագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վարչության գլխավոր և առաջատար մասնագետների գործառույթները գրեթե նույնական են (մասնակցել համալսարանի ՈՆԱ գործընթացներին, կազմակերպել ուսանողների կողմից դասախոսների գնահատման գործընթացներ և այլն): Հաստատության բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բացի աշխատավարձից որոշակի գումար (500000 ՀՀ դրամ) է նախատեսվում Որակի ապահովման գործընթացների խթանման համար՝ առանց հստակեցնելու ծախսերի ուղղությունները: Քոլեջի աշխատանքների համակարգման համար առանձին պատասխանատու առկա չէ:

Ներքին և արտաքին շահակիցների շրջանում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով հիմնականում կիրառվող գործիքներն են հարցումները և դրանցից բխող և դրանց հաջորդող ֆոկուս խմբային քննարկումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցաթերթիկը 2023-2024թթ. վերանայվել է: Փոխվել են հարցումների անցկացման հաճախականությունը (մինչ այդ հարցումներն իրականացվել են յուրաքանչյուր կիսամյակ, իսկ այժմ ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ), հարցերի գնահատման միավորները: Սակայն հարցումների մեթոդաբանության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումների նպատակները և կիրառվող հարցաթեթերը նույնն են բուհի և քոլեջի համար՝ չսահմանելով հստակ նպատակներ և չարտացոլելով քոլեջի առանձնահատկությունները: Բացի այդ նաև հարցումների իրականացման գործիքակազմը

չի փորձարկվել, չի դիտարկվել դրանք՝ քոլեջի համար նույնությամբ կիրառելիության և դրանց՝ քոլեջի նպատակների հետ փոխկապակցվածության հարցը:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈԱ վարչության կողմից իրականացվում են հետևյալ հարցումները՝ «Ուսանողների կողմից դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ գնահատման», «ՄՈՒՀ-ից բավարարվածության գնահատման», «Բավարարվածությունը պրակտիկայից», «Օտարերկրյա ուսանողների կրթական, տեխնիկական, սանիտարահիգենիկ կարիքների բացահայտման», «Միջոցառումների արդյունավետության գնահատման հարցում» և այլն: Հարցումներն անցկացվում են ինչպես օնլայն, այնպես էլ հարցաթերթիկների կիրառմամբ:

Հարցաթերթիկների ոսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված են ինչպես բաց, այնպես էլ փակ հարցեր, սակայն առկա են հարցեր, որոնք վերաբերում են համալսարանի գործընթացներին, սակայն դրանց պատասխանում է նաև հարցմանը մասնակցող քոլեջի ուսանողը կամ դասավանդողը: Այսպես, օրինակ, կարելի է նշել հետևյալ հարցերը. արդյոք հետադարձ կապ ունե՞ք գիտխորհրդի հետ, ի՞նչ եք ակնկալում բուհում սովորելիս, ինչպե՞ս եք գնահատում ձեր ստացած կրթության որակը համալսարանում:

Հարցումների արդյունքների ընդհանրացումը կատարվում է երեք փուլով՝ քանակական տվյալների հավաքագրում, այնուհետ քանակական հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ՈԱՎ-ն իրականացնում է Ֆոկուս խմբային քննարկումներ: Օրինակ, քանակական տվյալներով բուհի և քոլեջի ուսանողների՝ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկացվածությունը ցածր է եղել: Այնուհետ անցկացվել է ֆոկուս-խմբային քննարկում: Երկու փուլերի արդյունքները ներկայացվում են ուսումնամեթոդական խորհրդի նիստին առաջարկություններ և բարելավումներ անելու համար: Այս ուղղությամբ առաջարկություն է արվել համապատասխան կառույցի՝ Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ մշակել միջոցառումների պլան, որպեսզի իրազեկվածությանն ուղղված միջոցառումները կրեն շարունակական բնույթ: Ռեսուրսներից բավարարվածության հարցումների շրջանակներում բացահայտված որոշ խնդիրներ լուծում են ստացել. 3 լսարանում օդորակիչներ են դրվել, ջրի դիսպանսեր սարքեր են ավելացվել հարկերում:

Փորձագիտական ուսումնասիրություններից և շահակիցների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ Քոլեջի ուսանողների և դասախոսների մասնակցությունը հարցումներին մշտապես ցածր է եղել: Մի շարք հարցումներ իրականացվել են միայն 1 անգամ (մասնավորաբար՝ պրակտիկայի արդյունավետության վերաբերյալ, դասախոսների կարիքների բացահայտման և այլ հարցումներ), առկա չեն արդյունքների համեմատական վերլուծություններ:

Բոլոր հարցումների ընդհանրացված արդյունքները և դրանց հիման վրա կատարված հետագա վերլուծությունները ներկայացված են բուհի հետ համատեղ (բացառությամբ դասախոսների կարիքների բացահայտման մեկանգամյա հարցման, որտեղ դասախոսների մասնակցության ցուցանիշը ցածր է), ընդ որում քոլեջի մասնակցությունն ընդհանուրի մեջ ցածր ցուցանիշ է կազմում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհի և Քոլեջի ընդհանուր ամփոփված տվյալների հիման վրա Քոլեջի մասով առանձին եզրակացություններ և առաջարկություններ չեն մշակվել:

ՈԱՎ-ը պլանավորում և կազմակերպում է պարբերական հանդիպումներ ներքին և արտաքին շահակիցների հետ, այդ թվում՝ Համալսարանի խորհրդի, ուսանողների,

դասախոսների և գործատուների հետ: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արդյունքերը չեն ներդրվել ՄԿԾ-ների բարելավման գործընթացներում և չեն նպաստել քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրմանը:

Անդրադառնալով կրթական ծրագրերի որակի ապահովմանը և արդյունավետության գնահատմանը՝ հարկ է նշել, որ օրինակ իրականացվել է «Հաշվապահական հաշվառում» և «Իրավագիտություն» Քոլեջի և Համալսարանի համանուն ծրագրերի համեմատական վերլուծություն, որը պարունակում է SWOT վերլուծություն և բարելավման առաջարկներ, ինչպես օրինակ, ավելացնել գործնական աշխատանքների ժամաքանակը, պարբերաբար վերանայել ՄԿԾ-ի վերջնարդյունքները՝ կապված աշխատաշուկայի պահանջարկի փոփոխությունների հետ: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզվեց, որ արդյունքները չեն ներդրվել կրթական ծրագրերի բարելավումների հիմքում:

Հարկ է նշել, որ ՈԱՎ-ը ֆոկուս-խմբային քննարկումներ է ունեցել որոշ գործատուների հետ: Օրինակ «Ատովմյան» իրավաբանական և խորհրդատվական ընկերության հետ քննարկվել է բուհի և քոլեջի շրջանավարտներից գործատուների ակնկալիքների տարբերությունները: Սակայն հարկ է նշել, որ արդյունքում բարելավման գործնական քայլեր դեռևս չեն իրականացվել:

Քոլեջի գործընթացների ՊԻԳԲ շրջափուլով իրականացումը փոխկապակցվում է ՈԱՎ-ի կողմից մշակված և ներդրված հաշվետվությունների գնահատման «ՊԻԳԲ ձևաչափի» հետ: Սակայն փորձագիտական ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց, որ վերջինս դեռևս ներդրված չէ քոլեջում, փորձարկվում է ստորաբաժանումների և քոլեջի տնօրենի աշխատանքային պլաններում առկա պատահականության սկզբունքով ընտրված 1-2 գործողությունների շրջանակում: Եվ առկա չեն դրա կիրառման արդյունքում ստացված ամբողջական գնահատումներ և վերլուծություններ: Ստորաբաժանումների մասով նաև առանձնացված չեն քոլեջի ուղղությամբ գործընթացները և դրանց արդյունավետության գնահատումները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ վարչության պետի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը, որին ներքին շահակիցների մասնակցությունն ակտիվ չի եղել, աշխատանքային խումբն ինքնավերլուծություն իրականացնելիս թիրախային խնդիրներ չի բացահայտել: Կազմված ինքնանվերլուծությունը, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները մասամբ արտացոլված են ինքնավերլուծությանը կցված հիմքերում, սակայն նրանց մասանկցությունը ԻՎ աշխատանքներում նկատելի չէր: Հարկ է նաև նշել, որ քոլեջի կողմից ներկայացված տվյալները հիմնականում մեկ տարվա կտրվածքով են, առանց բուհ-քոլեջ տվյալների տանարջատման, գործառույթների, նպատակների և դրանց վերաբերյալ հաշվետվությունների սահմանզատման:

ՈԱՎ-ի կողմից իրականացված հարցումների որոշ վերլուծություններ, որոնք ներառում են բուհի հետ ընդհանրացված արդյունքները (այսպես՝ 2023-2024 ուստարվա առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողների կողմից դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ դասախոսների գնահատման հարցումներ, 2023-2024 ուստարվա ուսանողների կրթական կարիքների բավարարվածությունը ՄՈՒՀ-ից), հասանելի են հաստատության պաշտոնական կայքում: Արդյունքները ներկայացվում են համալսարանի ռեկտորատի նիստերին, Քոլեջի կառավարման խորհրդի նիստում դեռ չեն հասցրել

դիտարկել: Փորձագիտական այցից պարզվեց, որ ներքին շահակիցները իրազեկ էին ռեսուրսների վերաբերյալ բարձրացված որոշ խնդիրներից, որ լուծում էին ստացել, մասնավորաբար՝ սանիտարահիգիենիկ և օդորակիչների տեղադրման վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ: Այսուհանդերձ, Քոլեջի որակի ապահովման համակարգը գործում է բուհի և քոլեջի համար համակցված ձևով, ինչի հետևանքով քոլեջի խնդիրները և անհրաժեշտ բարելավման ուղղությունները հաճախ չեն տարանջատվում ընդհանուր վերլուծությունների մեջ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի սահմանելու առանձին տվյալների հավաքագրման ուղղություններ և տարանջատելու վերլուծությունները բուհից, ինչը հնարավորություն կտա Քոլեջի կառավարման որոշումները դարձնել ավելի նպատակային և պայմանավորել քոլեջի իրական կարիքներով:

Հարցումների գործիքակազմը, լինելով ընդհանուր բուհի և քոլեջի համար, չի ապահովում քոլեջի համար անհրաժեշտ ճշգրտությունը: Եթե քոլեջը հարցաթերթիկները վերանայի՝ համապատասխանեցնելով իր առանձնահատկություններին, ապա արդյունքները ավելի կիրառելի կլինեն, և կառաջանա հնարավորություն հստակ բարելավման քայլեր մշակելու համար՝ միաժամանակ բարձրացնելով հարցումների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների պարբերականության և համակարգվածության պակասը սահմանափակում է շարունակական բարելավման հնարավորությունը: Այս տեսանկյունից քոլեջին անհրաժեշտ է ապահովել պարբերական հարցումներ և կատարել համեմատական վերլուծություններ ժամանակային կտրվածքով, ինչը թույլ կտա հայտնաբերել զարգացման միտումները և կանխել խնդիրների խորացումը՝ բարելավելով որոշումների ժամանակին և հիմնավորված լինելը:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում, որ հարցումների արդյունքները հիմնականում մնում են վերլուծության մակարդակում և չեն վերածվում կոնկրետ գործողությունների ծրագրերի: Եթե քոլեջը ձևավորի գործողությունների հստակ պլան՝ հիմնված կարիքների վերհանման արդյունքների վրա, ապա դրանք կծառայեն որպես ուղեցույց ծրագրերի բարելավման համար՝ վերափոխելով հետադարձ կապը գործնական առաջընթացի:

Ուսանողների և դասախոսների մասնակցությունը հարցումներին և հետադարձ կապի գործընթացներին ցածր է, ինչը սահմանափակում է տվյալների ամբողջականությունը: Քոլեջը պետք է ձեռնարկի միջոցներ՝ խթանելու շահակիցների ներգրավվածությունը՝ իրազեկման միջոցառումների, ուսանողական կառույցների ակտիվացման միջոցով, ինչը կապահովի ավելի ներկայացուցչական տվյալներ և կբարձրացնի որոշումների վստահելիությունը:

Որակի ապահովման համակարգում ներգրավված մասնագետների գործառույթների կրկնությունը և դրանց հստակության բացակայությունը նվազեցնում է արդյունավետությունը: Գործառույթների վերանայումը և հստակեցումը քոլեջի ուղղությամբ կապահովի գործընթացների ավելի արդյունավետ կազմակերպում:

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջին անհրաժեշտ է ամբողջությամբ ներդնել ՊԻԳԲ շրջանակը բոլոր մակարդակներում, ինչը կապահովի շարունակական բարելավման ամբողջական շղթան՝ պլանավորումից մինչև գնահատում և բարելավում:

Քոլեջը պետք է ապահովի նաև շահակիցների լիարժեք ներգրավվածությունը և ինքնավերլուծության արդյունքների լայն տարածումը՝ խթանելով որակի մշակույթի ձևավորումը և ներքին մոտիվացիայի բարձրացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ներկայումս որակի ապահովման համակարգի կողմից իրականացված որոշ վերլուծություններ հրապարակվում են համալսարանի մակարդակով, սակայն նաև գտնում է Քոլեջի մակարդակում արդյունքների ներկայացումը կառավարման խորհրդին թույլ կտա ընդունել ավելի հիմնավորված և թիրախային որոշումներ՝ նպաստելով որակի ներքին ապահովման համակարգի կայացմանը և Քոլեջի երկարաժամկետ զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հստակ չեն որակի ներքին ապահովման համակարգի առջև դրված խնդիրները, առկա չեն համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչներ, հաստատության իրականացրած քայլերը չեն նպաստել քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրմանը, որակի ապահովման համար կիրառվող գործիքակազմն ու մեխանիզմները չեն նպաստում հաստատության զարգացման ուղղություններն ընդգրկող կարիքների վերհանմանը և տվյալների հավաքագրմանը, իրականացված հետազոտությունները դեռևս չեն հանգեցնում ռազմավարական զարգացման արդյունավետ իրականացմանը, քոլեջի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը չի ապահովել բավարար հիմքեր որակի արտաքին գնահատման գործընթացների համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Արմենուհի Սարգսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

20-ը մայիսի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ. ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ. շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ. եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016թթ. եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017- 2018 թթ. եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2024թթ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդես է եկել որպես ավագ գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ. դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018 թ.-ից ՇՊՀ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 60-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Գոհար Մկրտչյան՝ 2009 թ. ավարտել է ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը՝ «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ, այնուհետև 2011 թ. նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ: 2011-2014 թթ. եղել է ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի հայցորդ (ռուսաց լեզվաբանության, տիպոլոգիայի և հաղորդակցման տեսության ամբիոն): 2015 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ երկու մասնագիտություններով՝ «Սլավոնական լեզուներ» (ռուսերեն) և «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»: 2011 թ. աշխատել է որպես ռուսաց լեզվի ուսուցիչ-թարգմանիչ Ա. Բակունցի անվան մանկավարժական քոլեջում: 2011-2012 թթ. աշխատել է որպես թարգմանիչ Armregions.am կայքում, իսկ 2014-2015 թթ.՝ որպես ռուսաց լեզվի դասախոս և թարգմանիչ «QLS» լեզուների կենտրոնում: 2016 թ.-ից առ այսօր դասավանդում է Հայկական բժշկական ինստիտուտում՝ ռուսաց լեզու: 2020 թ.-ից առ այսօր զբաղեցնում է ՀԲԻ-ի հայոց լեզվի և օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնը, 2022 թ.-ից՝ նույն ամբիոնի դոցենտ է, իսկ 2023 թ.-ից ՀԲԻ-ի կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավարն է: Մասնակցել է բազմաթիվ հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստման դասընթացների, ներառյալ Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի, Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի և այլ հեղինակավոր կենտրոնների կողմից կազմակերպված ծրագրեր: Հեղինակ է 12 գիտական հոդվածների և ուսումնամեթոդական ձեռնարկի՝ նախատեսված բժշկական մասնագիտացման ուսանողների համար:

Անահիտ Արշակյան՝ 1992 թ. ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի մանկաբուժական ֆակուլտետը՝ մանկաբույժի մասնագիտությամբ: 1992-1993 թթ. անցել է ինտերնատուրա նույն ինստիտուտում՝ մանկաբույժի որակավորմամբ: 2010-2011 թթ. անցել է օրդինատուրա ընտանեկան բժշկության ամբիոնում՝ ստանալով ընտանեկան բժշկի որակավորում: 1993 թ.-ից առ այսօր աշխատել է Մարտունու ԲԿ-ում՝ որպես մանկաբույժ: 2001 թ.-ից համագործակցում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ՝ դասավանդելով «Մանկական հիվանդությունների ինտեգրված վարում» ծրագիրը: 2002-2008 թթ. աշխատել է «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում որպես ուսումնական մասի վարիչ, իսկ 2008 թ.-ից մինչ օրս զբաղեցնում է նույն քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնը: 2021 թ. արժանացել է ԿԳՄՍ նախարարի շնորհակալագրին՝ կրթության և դաստիարակության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար:

Անգելինա Տոնոյան՝ 2022 թ.-ից սովորում է Կոտայքի Տարածաշրջանային Պետական Քոլեջում՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	**12.03.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ստորաբաժանումների (Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, արտաքին կապերի բաժին, Շրջանավարտների և պրակտիկայի կենտրոն) ղեկավարների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:20	13:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի անդամների հետ	13:30	14:20	50 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

N.	**13.03.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	12:30	13:20	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե

6.	Զուգահեռ հանդիպում **«Քույրական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում **«Ատամնատեխնիկական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում **«Քույրական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Ատամնատեխնիկական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում **«Քույրական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում **«Ատամնատեխնիկական գործ»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:30	18:00	30 րոպե

N.	**14.03.2025 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների (Հաշվապահություն, տնտեսական մաս, բուժկետ, ՄՌԿ բաժին, Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն, գրադարան) ղեկավարների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում Որակի ապահովման վարչության աշխատակիցների հետ	10:30	11:30	60 րոպե

3.	Բաց հանդիպում	11:40	12:40	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:00	14:50	50 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:00	17:30	90 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Աշխատաշուկայի վերլուծություններ	1
2.	Բյուջե և կատարողական՝ վերջին երեք տարիների համար	1
3.	Քոլեջի Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ	1
4.	Քոլեջի արդյունավետության գնահատման ցուցիչներ	2
5.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ՝ վերջին երեք տարիների համար	2
6.	Պրակտիկայի օրագրեր	3
7.	Շրջանավարտների բազա	3
8.	Կրթական ծրագրերի համեմատական վերլուծության հիմքեր	3
9.	Կրթական ծրագրերի մշտադիտարկման հիմքեր	3
10.	Մատյաններ	3
11.	Պետական ամփոփիչ ատեստավորման տոմսեր, քննական տոմսեր, հարցաշարեր	3
12.	Պետական քննությունների արդյունքում հանձնաժողովների նախագահների ներկայացրած առաջարկություններ և դիտողություններ	3
13.	Ուսանողական խորհրդի գործունեության պլաններ և հաշվետվություններ	4
14.	Կուրսղեկների աշխատանքային պլաններ	4
15.	Հեռացված և վերականգնված ուսանողների տոկոսը՝ վերջին երեք տարիների համար	4
16.	Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ցանկ և պաշտոնների նկարագրեր	5
17.	Դասախոսական կազմի տարիքային վերլուծություն	5
18.	Քոլեջի վարչական աշխատակիցների՝ դասավանդման գործընթացներիում ներգրավվածության հիմքեր	5
19.	Քոլեջի թափուր հաստիքների համալրման մրցութային փաթեթներ	5
20.	Դասալսումների կազմակերպման և գնահատման կանոնակարգ	5
21.	Դասալսման հիմքեր	5
22.	Դասախոսական կազմի վերապատրաստման պայմանագրեր կամ ֆինանսական հաշվետվություններ	5

23.	Դասախոսական կազմի կատարելագործման, որակավորման բարձրացման պլան-ժամանակացույց	5
24.	Ուսանողների և դասախոսների կողմից տպագրված աշխատանքների ցանկ՝ վերջին երեք տարիների համար	6
25.	Մասնագիտական գրականության ցանկ (Քոլեջի համար՝ ըստ մասնագիտությունների)	7
26.	Տնօրենի տարեկան հաշվետվություններ՝ վերջին երեք տարիների համար	8
27.	Արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ և ներկայացվող հաշվետվություններ	8
28.	Կայքի և սոցիալական ցանցերի դիտելիության հիմքեր	8
29.	Համագործակցության հուշագրերի ցանկ	9
30.	Պրակտիկաների պայմանագրերի ցանկ և պայմանագրեր	9
31.	Քոլեջի տեղական գործատուների ցանկ	9
32.	Գործատու դասախոսների և շրջանավարտ դասախոսների թիվ	9
33.	Կարիքների վերհանման հարցումների ցանկ	10
34.	Կարիքների վերհանման վերլուծություններ	10
35.	Ուսանողների կողմից դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ գնահատման վերլուծություններ	10
36.	Գնահատման մեթոդաբանություն և հարցումների պարբերականություն	10
37.	Ֆոկուս խմբային հարցումների հարցաշար, վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. մասնագիտական կաբինետներ,
3. համակարգչային լսարան,
4. ստորաբաժանումներ,
5. մարզադահլիճ,
6. բուժկետ,
7. գրադարան։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ